

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

400-1325

Մ. Ս. ԵՊԻՏԵՑՆ

ՊՈԼԻՏԵԽՆԻԿ
ԴՊՐՈՑԻ
ՀԱՄԱՐ

ՊԵՏԶՐԱՏ 1933 ՅԵՐԵՎԱՆ



Am-1325


Մ. Ս. ԵՊԻՏԵՅՆ

Պ Ո Լ Ի Տ Ե Խ Ն Ի Կ
Դ Պ Ր Ո Ց Ի
Հ Ա Մ Ա Ր

11
23767



Պ Ե Տ Շ Ր Ա Տ 1 9 3 3 Յ Ե Ր Ե Վ Ա Ն



ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԿԱՅԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ե ՁԵՌՔ ԲԵՐՈՂ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԸՆԴԱՐՁԱԿԱՄԱՆ ՅԵՎ ԴՊՐՈՑ-
ՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ»

Տարրական և միջնակարգ դպրոցների մասին կուսակցության
կենտրոնական կոմիտեյի վորոշումը սոցիալիզմի դարաշրջանում պոլի-
տիկոնիկական դպրոցի շինարարության ծավալուն ծրագիրը և հան-
դիսանում:

Կենտրոնական կոմիտեյի վորոշման մեջ հատուկ բաժին կա նվիր-
ված XVI կուսհամագումարի՝ ընդհանուր պարտադիր տարրական ու-
սուցման մասին հանած պատմական վորոշումից հետո ընկած ժամա-
նակաշրջանում մասսայական դպրոցի շինարարության արդյունքներին:

Կենտկոմը հիշատակում է մի շարք քանակական ցուցանիշներ,
վորոնք լուսարանում են այն ուղին, վոր անցել է դպրոցական ցան-
ցի ծավալումը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո:

«Տարրական և միջնակարգ դպրոցներում սովորողների թիվը
1914 թվականի 7,800 հազարից 1931 թվականին հասավ 20 միլիոնի:
Արմատապես փոխվել է դպրոցների սոցիալական կազմը: Բան-
վորների և գյուղի աշխատավոր լայն մասսաների յերեխաները, վորոնք
առաջ հնարավորություն չունեին սովորելու դպրոցում, այժմ հանդի-
սանում են դպրոցի հիմնական աշակերտությունը: Մայրենի լեզ-
վով ուսուցումն ընդգրկել է խորհրդային Միության կուլտուրապես
ամենահետամնաց ժողովուրդներին և ուսուցվում է 70 լեզվով...
Դպրոցն առանձնապես նշանակալի նվաճումներ կատարեց կուսակցու-
թյան XVI համագումարի՝ ընդհանուր պարտադիր ուսման մասին
հանած պատմական վորոշումից հետո: Միայն այս վերջին տարվան
ընթացքում սովորողների թիվը տարրական և միջնակարգ դպրոցնե-
րում 13,5 միլիոնից հասավ 20 միլիոնի: Բացի այդ, ֆարգործուանե-
րում ու տեխնիկոսներում կան 1,400 հազար սովորողներ»:

Կենտկոմի վորոշման մեջ դպրոցական շինարարության միայն
քանակական խոշոր հաջողությունների մասին չի խոսվում: Այնտեղ
խոսվում է նաև դպրոցական աշխատանքների նոր բովանդակության
մասին. սկզբունքորեն միանգամայն տարբեր է դարձել դպրոցի ամ-
բողջ աշխատանքի բովանդակությունը»:

Բերելով շարունակության մեջ վերջին յերկու տարում մեր
դպրոցի աշխատանքների վորակի փոփոխությունը նշող մի շարք ցու-
ցանիշներ՝ յերեխաների արտադրական աշխատանքի կազմակերպումը,

դպրոցների ամրացումը ձեռնարկություններին, խորհանդեսություններին, ՄՏԿ-ներին, կոլտնտեսներին, դպրոցի հասարակական աշխատանքի ծավալումը՝ Կենտկոմն արձանագրում է, վոր այս բոլորի շնորհիվ դրված են դպրոցի վերակառուցման հիմքերը պոլիտեխնիցիզմի բազայի վրա»:

Մրանք Հափաղանց նշանակալից խոսքեր են՝ «դրվել են դպրոցի վերակառուցման հիմքերը պոլիտեխնիցիզմի բազայի վրա»:

Մենք գիտենք, վոր վերջին յերկու տարվա ընթացքում պոլիտեխնիկական դպրոցի համար յեղած շարժումը կրում էր ամենատնային մասնաշաղկապի շարժման բնույթ: Դպրոցների ամրացումը ձեռնարկություններին, դպրոցի բարձր խմբերի աշակերտության աշխատանքի կազմակերպումը, մանկավարժական պոլիտեխնիկական վերապատրաստումը, դպրոցի բազմադան հասարակայնորեն-սոցիալար աշխատանքները՝ կապված սոցշինարարության խնդիրներին, ուսումնական նոր մատերիալը՝ այդ բոլորը դպրոցական ամբողջ աշխատանքի «սկզբունքորեն տարբեր» ցուցանիշներն են հանդիսանում:

ՀԱՐԱՎԱՐՈՒՄ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՅԵՂԱՅ ՍԽԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ճարրական և միջնակարգ դպրոցների շինարարությունն ունեցավ հաջողություն նաև այն պատճառով, վոր նա ընթացավ աջ-ոպորտունիստական տարրերի դեմ մղվող պայքարի պայմաններում, տարրերի, վորոնք չեն հավատում պոլիտեխնիկական դպրոցի ապագային: Այդ տարրերի դեմ յեղած ջախջախիչ հարվածն ապահովեց այն հաջողությունները, վորոնց մասին խոսվում է Կենտկոմի վորոշման մեջ:

Հարկավոր է ամենայն պարզությամբ ասել, վոր այդ հաջողություններն սքողելու փորձ անողները և այն մարդիկ, վորոնք չեն հասկանում այն բանի նշանակութունը, վոր հիմա ստեղծվել են «դպրոցի վերակառուցման հիմքերը պոլիտեխնիցիզմի բազայի վրա», վորոնք չեն հասկանում կուս. XVI համագումարից հետո դպրոցական շինարարության բնագավառում գոյություն ունեցող հարձակման նշանակութունը, ջուր են ածում աջերի ջրաղացին: Աջերն այժմ շահագրգռված են, վոր նսեմացվի դպրոցի պոլիտեխնիկացման ճանապարհին յեղած այդ հարձակման նշանակութունը:

Բայց հիմնովին սխալ կլիներ գործն այնպես պատկերացնել, թե Կենտկոմի ներկա վորոշումը «ջջաղարձ» էի, թե Կենտկոմի այդ վորոշումը էի թելադրում մի շարք փաստաթղթերի ու դրույթների վերանայման անհրաժեշտությունը: Ընդհակառակը, Կենտրոնական Կոմիտեյի այդ վորոշումը խոսում է այն մասին, վոր դպրոցական աշխատանքների վերելքի պրոցեսում արվել են մի շարք սխալներ, վորոշ տեղեր շփոթել են ինչպես «դպրոցի մահացման» հակալինիյան թեորիայի ազդեցությամբ, այնպես էլ դպրոցի կոնկրետ ղեկավարման անբավարարության հետևանքով: Կենտ-

ձորմն իր վորոշմամբ ուղղելով այդ սխալները, լենինյան ճիշտ ճանապարհ և ցույց տալիս մեզ:

Պատահական չի, վոր Կենտկոմի վորոշման մեջ գրեթե ամբողջովին մեջ են բերված լենինի գլխողութվուհները Ն. Կ. Կրուպսկայի՝ պոլիտեխնիկական դպրոցի մասին կազմած թեզերի առթիւ: Այդ սխալների բացասումը ջուր և ածուս «ձախերի» ջրաղացին, վորոնք Կենտկոմի այդ վորոշմամբ հակահարված ստանալով պոլիտեխնիկական դպրոցի շինարարության գործում իրենց հայտաբերած հակալենինյան թեորիաներին՝ չեն ցանկանում տեսնել այդ հակահարվածը և հենց դրանով չեն ուզում տեսնել այն շրջադարձը, վոր կա Կենտկոմի այս վորոշման մեջ:

Աշխատանքի առանցքը ներկայումս պետք և կազմի այն, վոր ստեղծենք Կենտկոմի վորոշումն իրականացնելու աշխատանքի լիակատար կոնկրետ ծրագիր: Իսկ այդ ծրագիրն ստեղծելու և, վոր գլխավորն է, գործին միահամուռ ուժերով ըստ հարկին ձեռնամուխ լինելու համար հարկավոր և ամենից առաջ հասկանալ այդ փաստաթղթի սկզբունքային ելութվուհը, ինչպես և գիտակցել այն կոնկրետ սխալները, վորոնց «խիում և» Կենտկոմի վորոշումը:

ՄԱՐՏԱԿԱՆ ՏԵՄՊԵՐՈՎ ԿԱԾՈՒՅՅԵԼ ՊՈԼԻՏԵՑԵՆԻԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Կենտկոմի վորոշումը լիովին հագեցած և պոլիտեխնիկական դպրոցի շինարարության շահերով: Պետք է ջախջախիչ հակահարված ստանան այն բոլոր վորձերը, վորոնք կաշխատեն ոգտադրծել այս փաստաթուղթը կամ նրա վորեւ մասը՝ վերադառնալու համար դեպի հին դպրոցը, մեքենական վարժեցման դպրոցը, «բանվորի և գյուղացու աշխատանքից կտրված» ուսուցումը:

Բայց ասել միայն այն, թե իր այս վորոշմամբ Կենտկոմը հաջող նախադրյալներ է ստեղծում պոլիտեխնիկ դպրոցի շինարարության համար— քիչ է: Կենտկոմի վորոշումը խոսում է այն մասին, վոր հենց այժմ ստեղծվել են պայմաններ պոլիտեխնիկ դպրոցի շինարարության մարտական տնմպերի համար: Կենտկոմի վորոշման մեջ վոչ միայն արձանագրվում է, թե «դրված են դպրոցի վերականգնման հիմքերը պոլիտեխնիցիզմի բաղալի վրա», այնտեղ տրվում է նաև հետեյալ ցուցումը. «արհեստանոցների քանակի ալելացումը թեպետ թվով անըավարար է և տեխնիկական դեռևս թույլ սարքավորված, սակայն դպրոցները գործարաններին, խորհտետեսութվուհներին, մեքենատարակտորային կայաններին, կոլտետեսութվուհներին ամբացնելը հնարավորութվուն է տալիս ալելի ու ալելի լայն ծավալի և արագորեն իրագործել դպրոցի պոլիտեխնիկացումը»:

Հենց դրանով կուսակցության Կենտկոմը հաստատում է, վոր այժմ ստեղծված են դպրոցի պոլիտեխնիկ շինարարության ծավալուն և արագ տնմպերին անցնելու նախադրյալները:

Ահա թե ինչու Կենտրոնի վերոշումը մահացու հարված է հասցընում պոլիտեխնիկական դպրոցի դանդաղիչ տեմպերի մասին յեղած աջ թեորիաներին, իսկ վեր աշդպիսի թորիաներ ունեյին թե թեորիաները և թե պրակտիկները, այժմ արդեն դժվար և բացասելի:

Իր ժամանակին լույս տեսավ «Խորհրդային մանկավարժական խնդիրներ» անունով մի ժողովածու: Այդ ժողովածուի մեջ կա Կալաշնիկովի հոդվածը՝ «Անցողիկ շրջանի խորհրդային մանկավարժության առարկան և խնդիրները»: Ահա թե ինչ է գրված այդտեղ՝ «Խնքսին հասկանալի չէ, վոր սոցիալիստական նոր բազիսին համապատասխանող ոժանդակիչ այդ վերնաշենքի փոփոխությունը կընթանա շատ դանդաղ»:

Այստեղ ասված է գիտականորեն, ինչպես սազական է գիտական աշխատանքներ գրող մարդկանց, բայց պարզ չի միթե, վոր Կալաշնիկովը չի հավատում պոլիտեխնիկական նոր դպրոցի զարգացման տեմպերին և «դանդաղ ընթացք» է գուշակում նրա համար: Խնդիրն ավելի լավ չի նաև ընկ. Պինկեվիչի մոտ. ընկ. Պինկեվիչն իր «Մանկավարժության ներածության կուրսի» մեջ մեզ հետաքրքրող այդ նյութի մասին գրում է. «Այսպիսով աշխատանքի պրոբլեմը դպրոցում մի կողմից պոլիտեխնիկական աշխատանքի պրոբլեմ է, մյուս կողմից՝ արտադրությանը կապվելու պրոբլեմ՝ այդ արտադրության մեջ յերեխաների որդանական մասնակցության իմաստով»: Ել չենք խոսում այն մասին, թե վորքան է աղավաղում սրանով ընկ. Պինկեվիչը պոլիտեխնիկ կրթության նյությունը, յերբ պոլիտեխնիզմը հակադրում է արտադրության մեջ յերեխաների մասնակցության կազմակերպմանը: Բայց դրանից անմիջապես հետո ընկ. Պինկեվիչը շարունակում է. «Յեթե մեր պայմաններում յերկրորդը (այսինքն արտադրության մեջ յերեխաների աշխատանքի կազմակերպումը:—Մ. Ն.) դժվար է իրագործել մասսայական մասշտաբով...». հենց այս է աջ ուղորտունիստական դրույթը, թե «մասսայական մասշտաբով անիրագործելի չէ» պոլիտեխնիկ կրթության կազմակերպման գործը: Պետք է ասել, վոր հին Լուսժողովամտի, մասնավորապես այդ գործի համար անմիջական պատասխանատու Սոցդեսպլավաբուլժյան պրակտիկայում նույնպես սխալ վերաբերմունք կար պոլիտեխնիկական դպրոցի շինարարության տեմպերի նկատմամբ:

Յերկրի ինդուստրացման ասպարեղում մեր առաջիկա վիթխարի տռաշնթագը և յերկիրը նոր տեխնիկայի վրա կանգնեցնելու խնդիրը հասկանալը պրակտիկայում հանգեցրեց սխալ յեզրտակացությունների, թե մենք ստիպված կլինենք դանդաղ տեմպերով առաջ գնալ դպրոցի պոլիտեխնիկացման գործում:

Համկ(բ) ԿԿ-ի ներկա վորոշումը և այն սլառմական խոսքերը, վոր ասված են այնտեղ պոլիտեխնիկական դպրոցի «միշտ ավելի լայն ու արագացրած» շինարարության մասին, մերկացնում են մեր

պոլիտեխնիկական դպրոցի դարգացման և աճման տեմպերի մասին յեղած աջ-ոպորտուն խոսակա՛ն պատկերացումները:

«ԳԻՏՈՒԹԵԱՆ ԷԻՄՔԵՐԻ» ՀԱՍՏԱՏՈՒՆ ՅՈՒՐԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Կենտկոմն առաջարկում և դպրոցի պոլիտեխնիկացումը չանջատել զիտության սխտեմատիկ և հաստատուն յուրացումից: Ամեն մի դործ, վորի նպատակը կլինի դպրոցի պոլիտեխնիկացումն անջատել զիտությունների և մանավանդ՝ ֆիզիկայի, քիմիայի ու մաթեմատիկայի սխտեմատիկ, հաստատուն յուրացումից, վորպիսի առարկաների ավանդումը պետք և կատարվի խստիվ վորոշված և ուշի-ուշով մշակված ուսման պլանների ու ծրագրերի հիման վրա և կիրառվի համաձայն խստիվ վորոշված դասացուցակների,— վոչ այլ ինչ է, բայց յեթև պոլիտեխնիկ դպրոցի գաղափարի ամենակոպիտ աղավաղումը:

Կենտկոմը պոլիտեխնիկ դաստիարակության այս լենինյան դրույթն այսպես պորզակիտրեն և հիշեցնում մեզ հատկապես նրա համար, վոր դպրոցի հիմնական թերությունը ներկա մոմենտում այն է, վոր ուսուցումը դպրոցում չի տալիս բավարար ծավալի հանրակրթական գիտելիքներ և անբավարար կերպով և լուծում տեխնիկումի և բարձրագույն դպրոցների համար միանգամայն զրադետ մարդիկ պատրաստելու խնդիրը, վորոնք լավ տիրապետեին գիտությունների հիմքերին: Յեւ վորպեսզի «իմաստուններից» վորեւ մեկին առիթ չտրվի յուրովի բացատրելու, թե ինչ բան է «գիտությունների հիմքերը», Կենտկոմն ինքը փակազգծերի մեջ բացատրում է «ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, աշխարհագրություն, մայրենի լեզու և այլն»: Նախագգուշացումն ավելի քան ժամանակին է: Ո՞ւմ հայտնի չէ, վոր գիտելիքների դործը մեր դպրոցում միանգամայն անբավարար է: Ձեռք բերած գիտելիքների կցկտուր և մակերեսային լինելը, նրանց դործնականում կիրառելու անկարությունը, տեխնիկական ունակությունների բացառիկ թուլությունը, պատմություն ու աշխարհագրություն չլմանալը, ամենատարրական ֆիզիկական յերևույթները և քիմիական պրոցեսները չհասկանալը, հասարակական պատկերացումների պրիմիտիվությունը — այս բոլորը զեռևս չափապահց տարածված են մեր դպրոցներում:

Գիտելիքների այդ անբավարար ծավալը բացառիկ կերպով դժվարացնում է մեր տեխնիկումների և բուհերի դործը, վորոնց համար «կադրեր» և պատրաստում միջնակարգ դպրոցը:

Ահա թե ինչու ավելի մեծ նշանակություն է ստանում այդ «հիմնական թերությունը»: Պետք է ավելի անթույլատրելի համարել այն վերաբեւժուեքը, վոր ցուցաբերվում էր մինչև վերջին ժամանակ դպրոցի միջոցով լայն ու հաստատուն գիտելիքներում զինվելու դործին: Յեւ իրոք, միջնակարգ հանրակրթական դպրոցն իրրև արհեստագիտական դպրոցի սոսկ նախնական աստիճան, վորքանով նա չի

զինավորում վորոշ մասնագիտությամբ, պետք է հիմնական առաջադրություններէց մեկը համարի լավ պատրաստութեամբ մարդիկ տալը, մարդիկ, վորոնք ի վիճակի յեն յուրացնելու տեխնիկումներում և բուհերում ավանդով մասնագիտական գիտելիքները և «գիտությունները»: Հենց Լենինն էլ խոսում է «գիտության հիմքերի» մասին, վորոնցով պետք է զինվի միջնակարգ դպրոցը: Հատկապէս ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի հումանիտար գիտելիքներէ և այլնի հիմունքները պետք է հիմնավորապէս և հաստատապէս յուրացվեն հանրակրթական տարրական և միջնակարգ դպրոցում, քանի վոր առանց այդ դպրոցը չի իրականացնում իր գլխավոր նպատակներից մեկը՝ պատրաստել ուժեղ մասնագիտական դպրոցներէ համար և զբանով մի տեսակէ տրվում է ժողովրդական կրթութեան սիստեմի բարձրագույն ողակներէց:

Այստեղ, գլխավորապէս այստեղ պետք է վորոնել մեր ժողկրթութեան սխառմի մեջ գոյութիւն ունեցող կարմաճութեան պատճառը: Կենսկոմի իր վորոշումով վճռական կերպով ուղղում է այդ, ցույց տալով «հիմնական թերութիւնը» և առաջարկելով դպրոցի ուսումնական աշխատանքի վորակը բարձրացնող մի շարք կոնկրետ ձեռնարկումներ: Կենսկոմի այդ վորոշման լույսի տակ ավելի պարզ դարձան այն փոխադարձ կապերը, վոր ունեն պոլիտեխնիկ դպրոցի «գիտութիւնների հիմքերի» մասին Լենինի ասածը և այն, թե ինչու յեր Լենինը «պոլիտեխնիկ ընդհանուր կրթութիւնից արհեստագիտական պոլիտեխնիկ կրթութեան անցնելու հասակի իջեցումը» 17 տարեկանից 15-ի... յերկրի աղքատութեան և քայքայման հետեանքով առաջացած ժամանակավոր միջոց համարում՝ կուսակցութեան ծրագրի հետ, վորը պահանջում է ապահովել ընդհանուր և պոլիտեխնիկ կրթութիւնը «յերկեսն ըոյսը յերեխաների համար մինչև 17 տարեկանը»:

Կուսակցութեան Կենսկոմի այս սկզբունքային դրույթի իրագործման ընթացքում մենք կպատահենք յերկու վտանգի: Աջերը կասեն. «Վերջապէս, հաստատուն ծրագիր, դասացուցակ, ֆիզիկա, քիմիա, մայրենի լեզու, աշխարհագրութիւն. չէ՞ վոր մենք ել հենց այդ ելինք ասում, նախագիշտացնում և անընդատ պնդում այդ մասին»: Աջ-ոպորտունիստական լազերի «իմաստունները» կփորձեն վրիժառութեան դիմել այն նպատակով, վոր դպրոցը դեպի հետ քաշեն: Բայց Կենտրոնական Կոմիտեն խոսում է պոլիտեխնիկական դըպրոցի հիմքերն ստեղծող գիտելիքների մասին: Կենտրոնական Կոմիտեն խոսում է սովորողներին դեպի մարքս-Լենինյան հեղափոխական աշխարհայացք տանող գիտելիքների մասին, վերջապէս այնպիսի գիտելիքների մասին, վորոնք բարձրացնում են դպրոցի և աշակերտութեան դերը սոցիալիստական շինարարութեան գործում:

Ի՞նչ ընդհանուր բան կա այդ գիտելիքների և «գերիմաստուն» աջ-ոպորտունիստների ասած «գիտելիքների միջև, վորոնց համար գի-

տելիքն ինքնանպատակ և և «սերտում», վորը հետ և պահում սոցիալիստական հասարակության համար ակտիվ պայքարողներ դաստիարակելու խնդրից:

Վոր այդպիսի վտանգ կա, այդ մեզ ցույց են տալիս փաստերը: Վորոնեժում Կենտկոմի վորոշումներին նվիրված ժողովում գլխավոր մի լուսաշխատավոր, վորը հայտարարեց. «Վերջապես ազատագրվեցինք. յերեք տարի տեղեկություններ եյի հավաքում, թե մեզ մոտ ինչ խայտառակ դրության մեջ և առարկաների ավանդման դոբժ. այժմ վերջապես բացեցին իմ բերանը, և յես կարող եմ խոսել այդ մասին»:

Հաղորդում են, վոր մի շարք մեզ խորթ մեթոդիստներ, վորոնք չկարողանալով աշխատել պոլիտեխնիկական հիմունքներով վերակառուցվող դպրոցում, յերկար տարիներ հեռացել եյին գործնական աշխատանքից, այժմ խնդիր են հարուցում կրկին աշխատանքի վերադառնալու:

Այս աջ գլխավոր վտանգը—մեզ դեպի հին՝ կոմունիստական դաստիարակությունից և պոլիտեխնիկ կրթությունից կտրված, խոսքի դպրոցը, գիտելիքների դպրոցը հետ տանելու ցանկությունը—մենք պետք և տեսնենք և կատարի հակահարվածի արժանացնենք:

Բայց կա և մյուս տեսնենք՝ «ձախ» պանիկյորները, վորոնք արդեն «վախեցնում են» մեզ: Օխնչպես, ուսուցման դպրոց, հաստատուն դասատախտակ, հաստատուն ծրագիր, ուսման պլաններ, դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին յենթարկել արտադրական և հասարակական աշխատանքները: Վտանգավոր և. այս ձեղքով ներս կսողոսկի ուսակցիոն մանկավարժը:

Մենք այդ «ձախ» պանիկյորներին կպատասխանենք. հենց շնորհիվ նրա, վոր կուսակցությունն իր վորոշմամբ հակահարված և տալիս դպրոցի մահացման «գիտության հիմքերին», կրթության և ուսուցչի դերի նվաստացման թեորիաներին, հենց այդ հակահարվածը կնպաստի մասսայական ուսուցչի ենտուղիազմի մորիլիզացիային՝ իսկական պոլիտեխնիկական դպրոցի համար մղվող պայքարի ոգտին:

ՌԻՍՈՒՅՄԱՆ ՇԱՂԱԳՊՈՒՄԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Այդ խնդրի վերաբերյալ Կենտկոմի վորոշման մեջ տեղ և դրավել մի փոքրիկ, ընդամենը միքանի տողից բաղկացած, բայց սկզբունքային և գործնական խորագույն նշանակություն ունեցող մի հատված: «Ուսուցման միացումն արտադրական աշխատանքի հետ անհրաժեշտ և կատարել այնպիսի հիմունքներով, վոր սովորողների հասարակական արտադրական վողջ աշխատանքը յենթարկված լինի դպրոցի կրթական ու դաստիարակչական նպատակներին»: Այս դիրեկտիվի կիրառման ժամանակ ել պետք և հիշել յերկու ֆրոնտում պայքարի մասին: Աջերը կարհամարհեն այս ձևակերպման առաջին մասը, վերտեղ

ասլիած և «ուսուցման միացումն արտադրական աշխատանքի հետ»։ Նրանք կաշխատեն ձևակերպման յերկրորդ մասի տակ թաղնիկնով վերացնել դպրոցից արտադրական աշխատանքը։ Խտացնելով և ընդհանրացնելով միորոշ դեպքերում արտադրական աշխատանքի գործադրման ընթացքում տեղի ունեցած իրոք վոր ազավադումները — յերբ յերեխաները սխալ կերպով, վրդովելիորեն սխալ կերպով են ոգտադործվել գործարանում, կոյտնտոււմ և նույնիսկ դպրոցական արհեստանոցում, յերբ յերեխաների արտադրական աշխատանքը դուրկ և յեղել վրեկե դաստիարակչական և կրթական նշանակությունից, — աջերն ամեն կերպ կխոշընգտեն արտադրական աշխատանքի և ուսուցման միացմանը։

Պոլիտեխնիկական առաջին համագումարից հետո մասսայական դպրոցը մենք վստահորեն դարձրինք յերեսով դեպի ձեռնարկություն, դեպի արտադրական աշխատանք և դրանով իսկ նպաստեցինք դպրոցի պոլիտեխնիկական հիմունքներով կառուցվելու հիմքերի ստեղծմանը։

Յեւ դեպի հին դպրոց, արտադրությունից կտրված, բանվորական և կոյտնտեսական կոլեկտիվի հետ ընդհանուր կյանք չունեցող դպրոց վերադառնալու փորձը մենք պետք և տեսնենք և նրա դեմ կռվենք,

Բայց կգտնվեն և «ձախեր», վորոնք կփորձեն կոծկել այդ ֆորմուլայի յերկրորդ մասը, վորտեղ շատ պարզ ասված և՛ հասարակական արտադրական աշխատանքը յենթարկել դպրոցի ուսուցմանական և դաստիարակչական նպատակներին։ Նրանք կաշնդն իրենց ֆորմուլան, այն և՛ դպրոցը գործարանի ցեխն է, ամեն ինչ յենթարկվում և գործարանի, արդֆինպլանին, դպրոցի աշխատանքի ամբողջ կազմակերպումը պետք և յելակետ ունենա արդֆինպլանը և այլն և այլն։ և դրանով իսկ կշարունակեն խախտել ուսման կայուն պլանները, ծրագրերը և դասատախտակները, ծվատել դպրոցը՝ Թույլ չտալով նրան, վոր նա սովորեցնի և դաստիարակի ինչպես վոր հարկն է։

Խնդիրը հենց այն է, վոր պետք և դիալեկտիկական գուդակցումն ստեղծել սովորողների մտավոր զարգացման, արտադրական աշխատանքի և հասարակական աշխատանքի մեջ՝ հասարակական և արտադրական աշխատանքը դպրոցի ուսուցմանական և դաստիարակչական նպատակներին յենթարկելու հիման վրա։ Խնդիրը հենց այն է, վոր գործարանը, կոյտնտեսությունը, արդֆինպլանը և այլն նյութի աղբյուր հանդիսանան դպրոցում ձեռք բերած սխտեմատիկ դիտելիքների ծավալն ամրացնելու և մեծացնելու համար, հասարակական-քաղաքական և տեխնիկական ընդհանուր զարգացման համար։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՇԱՑԱՆՈՑՆԵՐ ԹԵՎ ԿՓՈՒՄՆ ՁՆՈՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ի՞նչ և առում այս մասին կուսակցության կենտրոնական կոմիտեն։ Ճեկատի ունենալով այն հանգամանքը, վոր կոմունիստական

դաստիարակութեան բաղկացուցիչ մասն է կազմում պոլիտեխնիկ կըրթութեամբ, վոր պետք է առ սովորողներին «գլխաւթյուններէ հիմքերը», ծանոթացնի նրանց «թեորիայում և պրակտիկայում արտադրութեան բոլոր գլխավոր ճյուղերին, «էկոնոմի» ուսման սերտ կապն արտադրական աշխատանքի հետ, — առաջարկել դաշնակից հանրապետութեաններէ յուսմողկոմատներին 1931 թվի ընթացքում լայնորեն ծախել պարոցներին կից արհեստանոցների և աշխատանքային սենյակների ցանցը, կապակցելով այդ դործը պայմանագրերի հիման վրա դպրոցները ձեռնարկութեաններին, խորհրտատեսութեաններին և կոլտնտեսութեաններին ամրացնելու գործի հետ»:

Այստեղ ևս կարող են ի հայտ գալ յերկու ֆասակար տեղեկանքներ, մեկը աջն է, վորը կրկին կաշխատի արհամարհել այս ձևավորման յերկրորդ մասը, նկատի կունենա մի այն արհեստանոցներն ու աշխատանքային սենյակները: Մի սխալ գրույթ, վորը վերադարձնում է մեզ դեպի այն, ինչ տեղի ուներ դպրոցում մինչև 1930 թ. աշխատանքի կազմակերպման բնագավառում: «Արտադրական աշխատանքի կազմակերպումը ձեռնարկներում, կոլտնտեսների, ՄՏԿ, խորհրտատեսութեաններին և ձեռնարկութեաններին հետ պայմանագրեր կնքելու մասսայական կամպանիան — ահա հատկապես սրանց մեջ և իր արտահայտութեանը դանում դպրոցի պոլիտեխնիկացման երկմնտներից մեկը, արհեստանոցութեան դեմ պայքարելու հնարավորութեանը: Փորձը ցույց տվեց, վոր այդ ամրացումն ամենաարժեքավոր նախագրայինք և ստեղծում կոմունիստական դաստիարակութեան համար, սովորողների դասակարգային համապատասխան ուղեգրութեան ստեղծելու համար: Բացի դրանից ձեռնարկութեաններին ամրացնելու և բարձր խմբերի համար այնտեղ արտադրական աշխատանք կազմակերպելու փաստն ինքնին մանկավարժական բացառիկ շահավետ մատերիալ է տալիս և՛ կրթական մատերիալի և՛ պոլիտեխնիկ շրջահայացքի ընդլայնման համար:

«Զախերը» կկոծկեն այս ձևակերպման առաջին մասը: Դպրոցական արհեստանոցների և աշխատանքի սենյակների արհամարհման փաստեր արդեն ունեցել ենք պրակտիկայում, հատկապես դպրոցի մահացման թեորիայի կողմնակիցների մոտ: Յեմ իրոք. լինչ իմաստ ունի դպրոցական արհեստանոցներով և աշխատանքի սենյակներով զբաղվելը, յերբ դպրոցը գործարանի ցեխն է, յերբ նույնիսկ նախադպրոցական հասակի յերեխաների համար նախատեսվում է աշխատանք կազմակերպել արտադրութեան մեջ: Այս տեղեկանքը մենք պետք է սեռենք:

Հենց դրա համար ել կենտրոնական կոմիտեն խոսում է «դպրոցի ամրացումը ձեռնարկութեան և դպրոցական արհեստանոցների ու աշխատանքային սենյակների լայն ծախվածան դուզակցելու մասին»:

«Մոցիալիզմի շրջանում, յերբ պրոլետարիատը դասակարգերի վերջնական մոշնչացումն իրականացնում և դասակարգային սրված պայքարի պայմաններում, բացառիկ կարևոր նշանակություն և ստանում կոմունիստական կուռ դաստիարակությունը խորհրդային դպրոցում և պայքարի ուժեղացումը խորհրդային դպրոցի յերեխաների մեջ հակապրոլետարական իդեոլոգիայի ելեմենտներ պատվաստելու ամեն տեսակ փորձերի դեմ»:

Դպրոցը դասակարգային կատարի պայքարի Ֆրոնտ և Մանկավարժական պրոցեսի յուրաքանչյուր մանրամասնի մեջ կարելի չէ տեսնել դասակարգային այդ պայքարի ելեմենտները:

Բուրժուական և մանր-բուրժուական մանկավարժությունն անկայացուցիչները դպրոցը դիպի հետ են քաշում. խորհրդային իշխանությունն իշխան թշնամիները փորձում են ոգտագործել դպրոցն ու նրանում ընթացող ամբողջ ուսումնա-դաստիարակչական պրոցեսն իրենց դասակարգային նպատակներով: Յեւ պրոլետարական դպրոցի շինարարությունն՝ կարևորագույն պահանջներից մեկն է ճապահովել պայքարը խորհրդային դպրոցի յերեխաներին հակապրոլետարական իդեոլոգիայի ելեմենտներ պատվաստելու ամեն տեսակ փորձերի դեմ: Այս ցուցումի կենսագործման ընթացքում ել մեզ սպասում է պայքար յերկու ճակատում. աջերի դեմ, վրոնք քողարկում են դասակարգային դաստիարակություն եյությունը, չեն տեսնում, վր մանկավարժների մեջ կան այնպիսիները, վրոնք փորձում են շրջել մեր դպրոցը ի ծառայություն դասակարգային թշնամուն: Մոսկվայի դպրոցներից մեկի վարիչը ծածկվելով համարյա թե Կուսկենտկոմի վրոշման տակ, արգելի եր յերեխաներին մասնակցելու ՄՅՈՒԴ-ի ցույցին, վրոշմենտե դա իրր խանգարում է ուսումնական աշխատանքի նորմալ կարգը:

Հարկավոր է տեսնել կարողանալ դասակարգային թշնամուն և ուժերն խփել Կենտկոմի վրոշումն ազավաղելու փորձերին:

Բայց կան նաև «ձախ» տենդենցներ, վրոնք մեքենայորեն կոտենան Կենտկոմի այս պահանջների կենսագործմանը: Դաստիարակչական աշխատանքը նրանք կհասկանան վրպես սովորողների չափազանց ծանրաբեռնումն հասարակական բազմազան պարտականություններով, առանց վերջիններիս շաղկապի դպրոցի ուսումնական նպատակների հետ, առանց յերեխաների ու պատանիների տարեքային առանձնահատկությունների և շահերի հաշվառման: Այս ձևով վերջին հաշվով հաճախ մոշ միայն հյուծում են յերեխաների ուժը, այլև հանգում բացասական, ուղղակի հակառակ հետևանքի. աշակերտները դառնում են կամ հասարակականորեն միանգամայն պասսիվ և կամ վեր են ածվում «կոմունիստական փոխասացներին», վրից այնպես զրուշացնում եր ընկ. Լենինը կոմյերիտովության III համագումարում ասած իր ճառի մեջ: Քիսկ խնդիրը հենց այն է, վր հաշվի առ-

նկիով յերեխաների կարիքները, շահերը և ուժերը, նմանց ուսման, դաստիարակության և կրթության յուրաքանչյուր քայլը շաղկապել պրոլետարների և աշխատավորների ընդհանուր պայքարի հետ՝ ընդդեմ շահագործական հին հասարակության» (Լենին)։

Մրանք են կուսակցության Կենտկոմի վորոշման մեջ հիմնական սկզբնական դրույթները։ Մեր խնդիրն է, պայքարելով յերկու Ֆրոնտում և աջ վտանգի դեմ՝ վորպես գլխավոր վտանգի, ճշտորեն, լենինյան ձևով, բայճիկորեն պարզել մեզ համար Կենտկոմի վորոշման այս սկզբունքային ելույթունը և հասկանալ, թե պոլիտեխնիկական դըպրոցի շինարարության գոյություն ունեցող պրակտիկայի վորտեղը և ինչն և ուղղում Կենտկոմը։

ԲԱՐԵՆԱՎԵՆ, ՄԵՓՈԴԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կենտկոմի վորոշման մեջ խոսվում է դպրոցի ղեկավարման բոլոր աշխատանքների մի խոշորագույն բացի՝ մեթոդական թույլ ղեկավարման մասին։ Ընկ. Բուբնովը իր վերջին ճառերից մեկում արդեն ասել է այն մասին, վոր մեզ հարկավոր է մեթոդական ասպարեզը մաքրել այնտեղ կուտակված ամեն տեսակ աղբից ու անպետքությունից։ Մեթոդական ղեկավարման կադմակերպման խնդրում եւ մենք պետք ե նկատի ունենանք նույն յերկու վտանգը։ Այնքը կքաշեն դեպի ապաքաղաքական, վոչ կուսակցական մեթոդիկան, դեպի պոլիտեխնիկիզմի և մեր կոմգաստիարակության և դպրոցական ամբողջ բազայի վրա հիմնված աշխատանքի բնույթի և բովանդակության հետ կապ չունեցող մեթոդիկան։ Վորպես իյուլուտրացիա մեջ բերենք մի հատված վոչ անձանտթ մանկաբան Վիդուսկու հոգվածից։ Ճիշտ է, դա վաղուց է գրված, բայց դրանից չի փոխվում գործի ելույթունը։

Ահա թե ինչ է գրում նա.

«Դաստիարակչական պրոցեսի հոգեբանական բնույթը, անկախ նրանից, թե մենք Ֆաշիստ ենք ուղում դաստիարակել, թե պրոլետար, լարախաղաց ենք պատրաստում, թե լավ աստիճանավոր, մեզ պետք է հետաքրքրի սոսկ ռեակցիաներ սահմանելու և մեխանիզմի տեսակետից, անկախ նրանից, թե ում ոգտին են հակվում այդ ռեակցիաները»։ Ահա չեղոք «ապաքաղաքական» մեթոդիկայի պայծառորեն արտահայտված մի թեորիա, վորն ըստ ելույթյան մեր ամբողջ մեթոդիկան բուրժուական մանկավարժների ճանկերը հանձնելու մի թեորիա յե։

Այնքն իրենց այն թեորիայով, թե մանկավարժությունը մի կիրարկելի դիտություն է, մանկավարժությունը մանկավարժական տեխնիկայի դիտությունն է, հանդես են գալիս վորպես ապաքաղաքական, վոչ կուսակցական մեթոդիկայի, բոլոր ժամանակների և բոլոր դասակարգերի դպրոցի համար ընդհանուր հանդիսացող մեթոդիկայի կողմնակիցներ։ Հասկանալի յե, վոր այդ բանը ճիշտ չի։ «Նին դպրոցը պատրաստում եր կապիտալիստների համար անհրաժեշտ սպասավոր-

ներ, հին դպրոցը գիտութեան մարդկանց դարձնում եր կապիտալիստներին ցանկալի կերպով խոսելու և գրելու հարկադրված մարդիկ։ Այդ նշանակում է, վոր մենք պետք է վերացնենք այն։ Բայց յեթե մենք պետք է այն վերացնենք, յեթե մենք պետք է այն խորտակենք, այդ նշանակում է արդյոք, թե մենք չպետք է վերացնենք նրանից մարդկանց համար այն բոլորը, վոր կուտակել և մարդկութեանը Դա նշանակում է արդյոք, թե մենք չպետք է կարողանանք տարբերել այն, ինչ անհրաժեշտ եր հանդիսանում կապիտալիզմի համար և ինչ անհրաժեշտ է հանդիսանում կոմունիզմի համար։

Լենինի այս հռչակավոր խոսքերը գործադրելի յեն համասարապես և մեթոդիկայի խնդիրներում։ Պարզ է, վոր այն բոլորից, ինչ ստեղծել է մեթոդիկայի և մանկավարժական տեխնիկայի ասպարեզում բուրժուական դպրոցը, մենք շատ րան պետք է վերամշակենք, քննադատութեան յենթարկենք, ստուգենք մեր վարոցի պրակտիկայում, համապատասխանորեն ձևափոխենք և չհրաժարվենք ոգտագործելուց։ Իրականում և՛ դալտոն-պլանը և՛ աշխատանքի լաբորատոր մեթոդը մեզ հասել են բուրժուական դպրոցից և, ինչպես, հայտնի յե, վերամշակված ձևով, դրանց գործադրութեանն անողուտ չի անցնում մեր դպրոցում։ Բայց «վերամշակված», վորովհետև պարզ է մեզ համար, վոր մեթոդիկան սերտորեն կապված է դպրոցական աշխատանքի բովանդակութեան հետ։ Ի՞նչու չէ, վոր մենք հատկապես այժմ սուրպահանջ ենք զգում նոր մեթոդիկաների։ Չե վոր խոսքը վերաբերում է այնպիսի մեթոդիկային, վորը համապատասխանի պոլիտեխնիկական դպրոցի շահերին, Մարքսի և Լենինի շահերին։ Մենք խոսում ենք այնպիսի «մասնավոր մեթոդիկայի» մասին, վորոնք կազմակերպում են ուսումնական և դիդակտիկ մատերիալը, ոժանդակում են յուրաքանչյուր տվյալ դիսցիպլինի ավանդմանը կոմունիստական դաստիարակութեան և սոցիալիստական դպրոցի խնդիրներին համապատասխան։ Բայց կա և մի ուրիշ վտանգ։ «Ձախ» վտանգը, վորը Թերաքնահատում և արհամարհում է մեթոդիկայի նշանակութեանը։ Ծիշտ վոր, յեթե պետք չի ծրագրել, ուսումնական պլան, դասատախտակ, ուսուցիչ, ել ինչի՞ յե պետք մեթոդիկան։ Այդ ստեղծբանը՝ մեթոդիկան։

Մեթոդիկայի այս ժխտումը ֆեասակար է վոչ միայն ինքնըստինքյան, այլև նրա համար, վոր «հին, փորձված» մեթոդիստների ձեռքն է հանձնում նոր մեթոդիկայի ստեղծման գործը։

Մենք դեմ չենք հին մեթոդիստների ոգտագործմանը։ Մեր խոսքը վերաբերում է «հին մեթոդիստներին», վորոնց վրա նստած է խոսքի, հին, նախահեղափոխական դպրոցի մամուլը, իսկ նոր մեթոդիկան կստեղծվի մեր նոր դպրոցի ելութեանը հասկացած, նրան սիրող մանկավարժների ձեռքով։

Այնքան ու «ձախերն» այս խնդրի վերաբերմամբ ըստ ելութեան

միանում են: Այնքան չեն համարում պոլիտեխնիկ դպրոցի շինարարութ-
յանը և դրա համար ել չեն դրադրում այդ դպրոցի կազմակերպա-
կան և մեթոդական խնդիրներով:

Ահա թե ինչպես ե պատկերացնում Կալաշնիկովը խորհրդային
դպրոցի խնդիրները. «Խորհրդային լուսավորական քաղաքականու-
թյան խնդիրն է (շատ պարտավորեցնող խոսքեր:—Մ. Ն.)—դպրոցի ըստ
ամենայնի ամրապնդումը, նրա նյութական բազայի ըստ հնարավորին
արագ խոշորացումն է, վերը վերջին հաշվով կնշանակի յերևանների
սոցիալական դաստիարակության խորացում, նրանց նվաճումն ընտա-
նիքից և շրջապատող անկազմակերպ միջավայրի ազդեցությունից»:
Ահա բոլորը. վոյ թե համառ աշխատանք՝ նվիրված պոլիտեխնիկական
դպրոցի կազմակերպման, մեթոդական և բովանդակության խնդիրնե-
րին, այլ միայն նրա համար, վեր «դպրոցն ըստ ամենայնի ամրա-
պնդվի, նրա նյութական բազան ըստ հնարավորին արագ խոշորացվի»,
բայց այս ծրագրի տակ, այս «լուսավորական քաղաքականության»
տակ կստորագրի բուրժուական ամեն մի մանկավարժ իր ազգային
բուրժուական դպրոցի համար:

«Զախերը», վորոնք «մահացրին» դպրոցը, արհամարհանքով են
նայում մեթոդիկային: Յեվ այդ՝ չնայած նրան, վոր դպրոցական շի-
նարարության ներկա ետապի համար բնորոշ է մեթոդական զգալի
անճարակություն:

Պոլիտեխնիկ դպրոցի մարտական շինարարության խնդիրներին
շաղկապված ճիշտ մեթոդական դեկավարության կազմակերպումը հնա-
րավոր է միայն աշերի և «ձախերի» դեմ մղվող պայքարի հիման վրա:

ԳՊՐՈՑԻ ՄԱՀԱՑՄԱՆ «ԶԱԽ» ԹՆՈՐԻԱՑԻ ՄԱՍԻՆ

Ընկ. Բուբնովը Պետգիտխորհրդի գիտամանկավարժական սեկ-
ցիայի 1931 թ. ապրիլի 23-ի իր յեկույթում՝ մանկավարժության բնա-
դավառում աջ-ոպորտունիստական թեորիտիկի դեմ մեր պայքարի
խնդիրների վերաբերյալ հետևյալն ասաց. «Մենք բավական հաջողու-
թյամբ լուծեցինք պայքարի խնդիրը մեր մանկավարժության բնա-
դավառում յեղած բուրժուական թեորիաների դեմ. մենք յեռանդուն
կերպով դաեցինք մանկավարժությունը բուրժուական թեորիաների
աջ-ոպորտունիստական արտահայտություններին»:

Ընկ. Բուբնովը սրանով հաստատում է, վոր վերջին տարիներում
մենք մեծ աշխատանք ենք կատարել մանկավարժության մեջ նկատ-
վող աջ-ոպորտունիստական թեորիաների մերկացման խնդրում: Միև-
նույն ժամանակ ընկ. Բուբնովը միանգամայն ճիշտ կերպով զգուշաց-
նում է. «Բայց թույլ տվեք ձեզ զգուշացնել այնպիսի յեզրակացություն-
ներից... վորոնք թուլացնում են մեր դասակարգային զգոնությունը
այդ բնագավառում: Ձեռք բերած հաջողությունները մեզ բնավ
չպիտք է հանգստացնեն»:

Ինչհետև աջ-ապրտուռնիստական տենդենցը ղրխավորագույն վտանգ է, ինչհետև, չնայած նվաճումներին, մենք չպետք է հանդատանանք։ Վորովհետև ոպորտունիստներն արտահայտելով բուրժուական մանկավարժությունը, որ յեկտրվորեն մեր դասակարգային թշնամու ուղղակի ագենտներն են հանդիսանում մանկավարժության մեջ, ինչպես և նրա համար, վոր աջ-ապրտուռնիստական տենդենցներին համար ընդարձակ սոցիալական բազա կա մեր յերկրում։ Բայց այդ վոչ մի դեպքում չի նշանակում, թե չպետք է վճռական ու ծավալուն պայքար մղել ընդդեմ «ձախերի», վորոնք մանավանդ մանկավարժության բնագավառում մանր-բուրժուական ռադիկալիզմն են ներկայացնում։ Այդ մանր-բուրժուական ռադիկալիզմն արտահայտող «ձախ» թեորիաները հատկապես վտանգավոր են ուսուցչական միջավայրում, քանի վոր «ձախ» թեորիաներն այստեղ ունեն վորոշ տրադիցիաներ։ Նախահեղափոխական շրջանի այսպես կոչվող առաջավոր ուսուցչությունը Տոլստոյի կողմնակիցները, ջատագովներն էյին «ազատ դաստիարակության» թեորիայի, այսինքն ըտրոր այն գաղափարների, վորոնք հատուկ են մանր-բուրժուական ռադիկալիզմին։

Արտագրոցական կրթության առաջին համագումարում 1919 թ. Լենինն ասաց, վոր արտագրոցական աշխատանքի զարգացման «առաջին թեորությունը բուրժուական ինտելիգենցիայից դուրս յեկած մարդկանց շատությունն է, վորոնք բանվորների և գյուղացիների նոր ձևով ստեղծվող կրթական հիմնարկներն ամենահարմար ասպարեզն են համարում փրկսոփայության բնագավառում, կամ կուլտուրայի բնագավառում իրենց սեփական հերյուրանքների համար. յերբ ամեն քայլափոխում ամենանորագույն ծամածռությունները վարպես ինչ-վոր նորություն էյին հրամցվում մաքուր պրոլետարական արվեստի ու պրոլետարական կուլտուրայի անվան առիվ ինչ-վոր գերբնական և նմանը չունեցող»։

100-տոկոսյա մարքսիզմի տեղ սաղացվող հերթական այդ «ծամածռումը» շատերին դալթակիլեցրեց և շփոթեցրեց։

Այդ պատճառով ել անտեղի չի, վոր Կենտկոմը մեզ զգուշացնում է, թե այժմ պետք է ուժեղացնել պայքարը «ձախ» թեորիաների դեմ։

Իրականում մենք դեռ շատ քիչ ենք մերկացրել դպրոցի մահացման, դպրոցը շրջապատի միջավայրի լուծման, մասսայական կուլտուրական աշխատանքի մեջ ձուլելու, տարերային պրոցեսը մանկավարժական կազմակերպված պրոցեսից դերադաս համարող հակալենինյան թեորիաները։ Այդ թեորիաների առաջնորդներն այժմ լուռ են. այդ նշանակում է, վոր նրանք զինաթափ չեն յեղել։ Նույնիսկ վորձեր են արվում իրենց անցյալը բացասելու։

Ընկ. Կրուպենինյան վերջերս հայտարարեց, վոր նա նույնիսկ յերբեք չի քարոզել և կողմնակից չի յեղել դպրոցի մահացման թեորիային։ Դա ասվել է վոչ թե մանկավարժության հետ վոչ մի կապ

չունեցող վորես ժողովում, այլ հայտարարվել կոմբաստիարակութ-
յան ակադեմիայում այնպիսի մարդկանց ներկայութեամբ, վորոնք
վերջին ժամանակներս եյին լսել այդ բանը:

Իսկապես զոյություն ունեցել և և ունի՞ դպրոցի մահացման հա-
կալներնյան թեորիս:

«Ինչոք մարդիկ — դրում և Շուլզինը — այժմ լողունդ են հանել,
թե պետք և շատ դպրոցներ շինել»: Այսպես ել զրված և տառացի:
Կենտկոմն իր վորոշման մեջ արձանագրում և, վոր հիմնականում իրա-
դրածված և ընդհանուր պարտադիր տարրական կրթությունը:

Կենտկոմը մեր առաջ դնում և ընդհանուր 7-ամյա կրթությունը,
վորպես մինչև 17 տարեկան բոլոր մանուկների ու պատանիների պար-
տադիր ընդհանուր և պոլիտեխնիկական կրթութեան իրականացման
ճանապարհի մի ետապ: Կուսակցութեան ղեկավարութեամբ մենք այս
տարիներում համառոտ են աշխատել ենք դպրոցական ցանցի շինարա-
րութեան համար, իսկ Շուլզինի վոգորմածութեամբ այս բոլորի համար
մենք ընկել ենք «խելոքներին» շարքը: Յեւ իրոք հարկավոր է զբաղ-
վել այս աշխարհագրական գործով, դպրոցների շինարարու-
թեամբ:

«Այսպես և աճում բազմակողմանիորեն զարգացած մարդը՝ Վոշ-
թե դպրոցում կամ մանկատանը և վոշ ել քիմիական լաբորատորիայի
որվակում: Վոշ, նրան արտաբերում և գործարանը, գյուղատնտեսու-
թյունը, դասակարգային պայքարը... և դաստիարակում և նրան վոշ
թե ֆուտբոլի ու ծածկոցի տակ մտած ուսուցիչը. նրան դաստիարա-
կում և ամբողջ հասարակարգը» (Գիտական մանկավարժութեան
պրոբլեմները) II ժողովածու):

Այստեղ ամեն մի խոսք ամար քոստական մանկավարժութեան
մի գոհար և, սկսած դպրոցը գործարանին, դասակարգային պայքարին
հակադրելուց, վերջացրած վրդովեցուցիչ արհամարհական, հակալենի-
նյան, վերաբերմունքից՝ հանդես ուսուցիչը, վորը Շուլզինին պատկե-
րանում և վոշ այլ կերպ, քան «ֆուտբոլի մեջ», «ծածկոցի տակ
մտած», «ջուրի քոշ»:

Զարմանալի համառութեամբ, վորն ավելի լավ գործի յե արժանի,
Շուլզինը քարոզում և դպրոցից հրաժարվելու գաղափարը:

«Պետք և սովորեցնել և վոշ դպրոցում»:

«Առաջ եր այդպես, վոր դպրոցում եյին սովորեցնում»:

«Ել ի՞նչ արժեք ունի այն դաստիարակությունը, դաստիարակու-
թեան մասին յիզած այն դիտությունը, յերբ նրանից դուրս, նրան
հակառակ, ուրիշ ֆակտորներ դաստիարակում են և այն ել ավելի
հուսալի ու հաստատուն կերպով»:

Այսպես և դրում Շուլզինը՝ խաչ դնելով դպրոցի վրա, լուծելով
նրան շրջապատի միջավայրի մեջ:

Իսկ ահա թե ինչ եր ասում Լենինը, ահա թե ինչպիսի բացառիկ
նշանակություն եր տալիս նա դպրոցին:

«Իսկապես ասած ի՞նչն և կյանքի կոչել արդեն հինգ տարի շարունակվող այդ սպանողը, յիթե՛ վոչ այն, վոր դպրոցն աշխատավոր ժողովրդի թշնամիների կողմից ողտազործվել և հանուն իրենց նպատակների... հարկավոր և գործադրել բոլոր ուժերը, եներգիան և զիտելիքները, վորպեսզի հնարավոր յեղածին չափ շուտով կանգնեցնենք մեր ապագա աշխատանքային դպրոցի շինքը, և միայն մեր դպրոցը կկարողանա պատենշել (оградитъ) մեզ ապագայում համաշխարհային ընդհարումներից և սպանդներից, վորոնք շարունակվում են արդեն 5-րդ տարին»:

Ի՞նչ ընդհանուր բան կա Շուլցիների թեորիայի և լենինիզմի մեջ, իսկ կուսակցական ծրագրում ի՞նչ տեղ և տրվում դպրոցին:

«Պրոլետարիատի դիկտատուրայի եպոխայում պրոլետարական դպրոցը լիս՝ միայն կոմունիզմի սկզբունքների հաղորդիչն և լինելու ընդհանրապես, այլ և նրա գաղափարի, պրոլետարիատի կազմակերպական ու դաստիարակչական ազդեցություն տարածողը աշխատավոր զանգվածների վոչ պրոլետար և կիսապրոլետար խավերի մեջ»:

Ի՞նչ ընդհանուր բան կա դպրոցի վերաբերմամբ Շուլցիների ու իր կողմնակիցների և կուսակցության ծրագրի մեջ:

Յե՛վ կամ թե ի՞նչ և ասվում էենտկոմի «Տարրական և միջնակարգ դպրոցների մասին» վորոշման մեջ. դպրոցի դերի մասին սոցշինարարության շրջանում:

«Էենտկոմն ընդգծում և դպրոցի նշանակության և դերի բարձրացող նշանակությունը սոցշինարարության մեջ»:

«Աճող» և վոչ թե շուլցիսյան «մահացող»։ Ի՞նչ ունեյին ընդհանուր Շուլցիներն ու «անցողիկ շրջանի մանկավարժությունը» կուսակցության դժի հետ:

«Ընդհանուր» բան չի ել կարող լինել, քանի վոր շուլցիսյան ամբողջ մանկավարժությունը կառուցված և մանր-բուրժուական հակալենինյան թեորիական հիմքերի վրա, թեև նա փետրավորվել և հեղդ-դափոխական «գերձախ» ֆրազներով:

Թեորիայի և պրակտիկայի զուգակցման հակամաքքսիստական, վոչ դիալեկտիկական ըմբռնումը, լենինի այն մտքի բացառիկ աղճատումը, թե «մասսաները սովորում են սեփական փորձով», տարերայնությունն առաջ ծնրադրելու տեսությունը զլիտվին մատնում են շուլցիսյան «մանկավարժության» մանր-բուրժուական եյությունը:

Իսկապես վոր, ի՞նչ և ասում թեորետիկ Շուլցիներ. «Բաց արեք վորևե մասնավոր մեթոդիկա—և դուք կգտնեք նրա մեջ հատկապես այն, թե ինչպես պետք և ուսուցիչը պլանաչափ, տեականորեն ներգործի, այսինքն՝ հինը, իսկ մեզ հարկավոր և ուրիշ բան. թե ինչպես պետք և նա ողնի յերեխային պլանաչափ, ճիշտ արագությունը դարգանալ, աճել իր աշխատանքի, իր փորձի ընթացքում: Դպրոցը դարձյալ դիտվում և վորպես ուսուցման դպրոց և ուսուցիչը վորպես ու-

սուցիչ և վոչ թե յերեխաների ոգնական՝ նրանց ինքնադաստիարակությունը և ուսուցումը կազմակերպելու գործում» (ընդգրծումն իմն և.—Մ. Ն.):

Այստեղ ամեն մի խոսք՝ ուսուցման և դաստիարակման մասին հակալեռնիսյան մի դրույթ և: Պայքարելով Պինկեվիչի անճիշտ բնորոշման դեմ, վորը մանկավարժական պրոցեսը սահմանափակում եր մեկի ներգործմամբ մյուսի վրա, Շուլցինը՝ սխալ գիրքերից «Կրակելով», դպրոցի և ուսուցչի դերը բացասելու շնորհիվ հենց դառնում և մենշեիկա-նարոգնիկական իդեալիզմի դրոշակակիրը մանկավարժության մեջ, մանր-բուրժուական «ազատ դաստիարակության» թեորիայի քարոզիչը: Շուլցինը խոսում և «ինքնադաստիարակման» մասին, «ոգնության» մասին, «փորձի պրոցեսում աճելու» մասին: Շուլցինը չի ընդունում «ներգործություն»: Բայց չե՞ վոր դա հենց բացասում և այն, վոր դպրոցը չեղոք չի, վոր դպրոցն «ուժեղագույն գենք և պրոլետարիատի ձեռքին նրա համար, վոր հատկապես առաջին հերթին «ներգործի», ուղղի, դաստիարակի հատկապես վորոշ դեմոկրատներով, ունակություններով և զաղափարախոսական ուղղությամբ մարդկանց ձևավորելու նպատակով: Ժխտել հատկապես այս ձևավորելու պայմանը՝ նպատակային դաստիարակությունը, նսեմացնել այն «ինքնադաստիարակմամբ» և փաստեր կուտակելու գործում յերեխային ցույց տրվող ոգնությամբ ուսուցչի կողմից, այդ նպատակը հենց «ազատ դաստիարակության» թեորիան և, վորը «սրված դասակարգային պայքարի պայմաններում» փաստորեն հասցնում և այն բանին, վոր խորհրդային դպրոցը հանձնվում և այնպիսի մարդկանց, վորոնք «հակապրոլետարական իդեոլոգիայի ելեմենտներ են պատվաստում»:

Իսկ վոր դա իսկապես վարդազույն ջրով սրսկված «ազատ դաստիարակության» թեորիան և, դրա համար վոչ մի կասկած չի մնում, յերբ դիմում ես Շուլցինի և Կրուպինինայի գիտական բնորոշումներին դաստիարակության և մանկավարժության առարկայի մասին:

Մանկավարժության ուսումնասիրության առարկան պետք և լինի մարդու սոցիալական ձևավորման ամբողջ պրոցեսի հետադետությունը, այն կազմակերպող մեթոդների և ձևերի ուսումնասիրությունը, վորոնց մեջ նա զարգանում և տվյալ կոնկրետ պատմական եպոխայի և տվյալ դասակարգային միջավայրում, նրան բնորոշող գործոնների ամբողջ գումարի և նրան իշխող որինաչափությունների հետազոտությունը:

Ցերկու անգամ «հետազոտություն» և մի անգամ «ուսումնասիրություն» — ահա և բոլորը... Իսկ ի՞նչ եր ասում էինինք. «Մինչ-մարքսյան սոցիոլոգիան և պատմագրությունը լավագույն դեպքում տվել են անկապորեն հավաքված փաստերի կուտակում և պատմական պրոցեսի տարբեր կողմերի պատկերացում»: Իսկ Մարքսը՝ «փիլիսոփաները միայն բացատրել են աշխատել այս կամ այն կերպ,

մինչդեռ բանն այն է, մյուս վերոխնդ այդ աշխարհը: Դրա համար ել մարքսիստական մանկավարժությունն սկսում է հատկապես մոչ թե «ուսումնասիրությունից և հետազոտությունից» (այդ ել հարկավոր է), այլ նպատակային ներգործումից, ակտիվորեն կոմունիստ, սոցիալական հասարակության մարտիկ ու կոոպացող ձևավորումից:

Ահա թե ինչպիսի արատուց, վերջուն ուղիներով ու մարքսիզմի տակ, կուսակցության, պրոֆմիությունների, խորհուրդների մանկավարժության մասին խոսող «ձախ» ֆրազների տակ վերագրվում է մեզ մոտ «ազատ դաստիարակության» ամենախսկական թեորիան, վորը ռադիկալները՝ նախահեղափոխական ցարական շրջանի առաջավոր ուսուցիչներն իրենց մանկավարժական դրոշն էյին համարում:

Ջարժեր այսքան կանգ առնել այդ թեորիայի վրա, յեթե նա առանձին տեղ չբռնեք իր բացառիկ «ներընդունելիությունը» (Բուր-նով):

Ժողկրթության որդաններն իրենց աշխատանքների բնթացքում բավարար հակահարված չեն տվել այս թեորիային: Այս թեորիայի «ներընդունելիությունն» այնքան մեծ է, վոր նա հավիշտակել ու վարակել է մեր դպրոցական շինարարության ամենաբազմատեսակ մասերը: Զի կարելի չհիշատակել 1933 թ. կայացած մի նախադպրոցական կոնֆերենցիա, վորտեղ լավեց Շուլցինի զեկուցումը մարքսիստական մանկավարժության վիճելի հարցերի մասին: Այնտեղ արդեն դպրոցի մահացման այս հակալինինյան, մեղ դասավրդող թեորիան արժանացավ գրեթե միահամուռ հավանություն:

Մանկավարժական բուհերի ծրագրերում կան Շուլցինի վողով գրված ամբողջ յեբեմներ: Դեռ մոտիկ անցյալում Շուլցինի թեորիայի դեմ դուրս գալը համարվում էր գրեթե հակակուսակցական, գործ: Այդ թեորիայի «ներընդունելիությունը» միայն ժողկրթության որդաններում չի արտահայտվել: Մոտավոր անցյալում ԺՏԴ կադրերի ինստիտուտն անհրաժեշտ գտավ լուծարքի յենթարկել դպրոցական կազմակերպությունը և առաջ քաշեց դպրոցական կազմակերպությունը «ազատորեն շարժվող ներթափանց ըրիզադներով» փոփոխելու «զադա-մարը. նույնիսկ ընկ. Պիստրակը, վորին թվում էր, թե յերբեք չի կարելի կասկածել այդ թեորիային հետևելու մեջ, վորն այժմ իրա-վացի կերպով քննադատում է իր նախկին մի շարք սխալ, աջ-ազոր-տունիստական դրույթները, դուրս յեկավ, վոր գրեթե նա էլ է ստու-րագրում այդ թեորիայի տակ. իր խմբագրությունը լույս տեսնող ժուր-նալի—«Պրիտեխնիկ աշխատանքը դպրոցում», 1930 թ. № 2—մի առաջ-նորդողի՝ Շչանուն կոլտնտային աշխատանքային դաստիարակու-թյան» տողերը վերջանում են հետևյալ խոսքերով. «Դաստիարակու-թյան մեջ հասարակական մասնակցության ծավալումով դպրոցի ֆունկցիաներն աճելի ու աճելի դառնում են դաստիարակությունը կազմակերպող և պլանավորող ֆունկցիա. միայն այսպես կարելի յե դնել հարցը: Միայն այսպես կդոտն իր ուղին կոլտնտ-աշխատանքա-յին մանկավարժությունը:

Զպետք ե կարծել, վոր այս բանում «մեղանչել են» միայն տե-
սարանները, վոր դպրոցի մահացման թեորիան բազմականացել ե
միայն դրական աշխատանքներով: Բնավ ել չե: Նա իր առանձին
մասերով թափանցել ե նաև պրակտիկայում: «ՅԿՈ»-ի 1931 թ. սեպտեմ-
բեր 9-ի համարում կա մի ըստ ամենայնի դաս տվող հոդված, վորը
վերնադրված ե «Խնչպես մահացրին դպրոցը Միջին Բուդայում»: Հե-
տևելով Շուլցինին ե Կրուպինինային դպրոցն այնտեղ կոչվում ե ար-
դեն վոչ թե դպրոց, այլ «մանկական բանվորական արտելի վարչու-
թյունը»: Խնչ գործ ունի այլևս «մանկական բանվորական արտելի
վարչությունը» դպրոցական առորյա այնպիսի «ատելի» առարկաների
հետ, ինչպես ուսումնական դասատախտակը, յերեխաների առաջադի-
մության հաշվառման մատյանը, ուսումնա-արտադրական պլանը ե այլն:
Այդտեղ դուք կդտնեք միայն աշխատանքային արտելի ընդհանուր
պլանը, աշխատանքի հաշվառման տեղեկագիր, պայմանագրեր կո-
տնտեսությունների ե այլ կազմակերպությունների հետ, աշխատանքի
ե պրակտիկայի զնալու արդյունքներ, ցուցակներ, հայտարարու-
թյուններ, հրահանգներ ե այլն:

Զարմանալու վոչինչ չկա, յերր այդ «դպրոցի» հաշվետվության
հեղինակն արձանագրում ե. «Տեսական շաղկապումը թույլ ե: Այլ
կերպ լինել ել չի կարող ուսուցիչների արձակուրդի նման դրվածքի
պայմաններում»: Գտնվել ե հանցավորը—«ուսուցիչների արձակուրդ-
ները», այստեղ ե ասված՝ գնալ կունստկամեա ե փղին չտեսնել: «Գրա-
դարանային աշխատանք չի տարվել»—շարունակում ե դեկուցումը,—
դա անթույլատրելի յե. բայց ժամանակն ու ուժերը (!) չբավականա-
ցան այդ կազմակերպելու»: Այդ եր պակաս. յերբ արդեն դպրոցը
գլխավոր են դարձրել ե ըստ Շուլցինի «ինքնադաստիարակել»: Ահա
թե ինչի յե հանդեպում զործնականում դպրոցի մահացման թեորիան:

Այդ թեորիայի նկատմամբ հանդես յեկավ ե հաշտվողական վե-
րաբերմունք, վորը ցանկանում ե հաշտվել Շուլցինի հետ, պատճառա-
բանելով, թե «դպրոցի մահացման հատուկ թեորիա չի յեղել», այլ
միայն թեորիայի «ակնարկություն» ե յեղել. կամ մշուշապատ կեր-
պով պաշտպանում են վոչ թե ամբողջ դպրոցի, այլ նրա առանձին ե-
լեմենտների մահացումը: Վորեն համբերատարություն դեպի այդպիսի
համաձայնողականությունը, այն պատրվակով, թե Շուլցինն ու իր
դեկավարած դպրոցական մեթոդների ինստիտուտը ժամանակին զըլ-
խավորել են բուրժուական մանկավարժության ե աշուպրտունխտա-
կան տարրերի դեմ յեղած պայքարը՝ անպայմանորեն անթույլատրելի
յե: Մանավանդ յերբ Շուլցինի «կրակոցները» աշուպրտունխտանե-
րին, վորպես կանոն, տրվել են հակաինինյան, սխալ դիրքերից:

Դպրոցի մահացման թեորիայի հետ կապված ու մի շարք կարևո-
րագույն պրակտիկ հետևություններ: Յեթե մահանում ե դպրոցը, ել
ինչ՞եւ նրա համար զլուխ ցավեցնել: Ահա ձեղ այդ մեթոդական «պրո-
փեկտյորության» թեորետիկական բաղան, խոսում եր Կենտկոմի վորո-

շուսմը Այստեղից ե բղխում և՛ ուսումնական պլանների արհամարհումը, և՛ ծրագրերի արհամարհումը, և՛ դպրոցական կյանքի բոլոր նորմալ կադմակերպությունների ջարդումը, և՛ դպրոցական ինքնավարության ձուլումը պիտենք կադմակերպության մեջ, և՛ դպրոցական խորհրդի լուծարքը, և՛ անհուսալի խառնաշփոթությունը մեթոդիկայի հարցերում:

Քանի վոր կա խառնաշփոթություն, հապա ինչպես չմիանա այդ գործին նույնպես «թեորետիկ» ընկ. Ֆրիդմանը: Ահա թե ինչպես եր նա «պրոթեկտորություն» անում. «Իրեն այնպիսի խնդիրներ առաջադրելու փոխարեն, վորպիսին և առարկաների վորոշ քանակի ուսումնասիրությունը վորոշ ծավալով ու հաջորդականությամբ, դպրոցը պետք ե ունենա հատուկ վորակներ մշակելու ծրագիրը»:

Ինչպիսի վորակներ: Այնպիսի վորակներ, վոր անհրաժեշտ են տվյալ շրջանի սոցիալիստական շինարարությանն անմիջականորեն մասնակցելու համար»:

Հետևաբար յուրաքանչյուր դպրոց մշակում ե իր համար հատուկ «վորակների» ծրագիր՝ հարմարեցնելով ավելալ խորհրդի, կոտնտի, գործարանի և այլնի կարիքներին: Ինչ գործ ունի ընկ. Ֆրիդմանը այն միասնական, ընդհանուր և սլոխտեխնիկական դպրոցի հետ, վորի մասին խոսում և կուսակցության ծրագիրը:

Ինչ գործ ունեն այդտեղ գլխելիքները: «Շրջանի» համար Ֆրիդմանին կարևոր ե սոսկ տեխնիկական վարժություն և, իր սեփական մանկավարժական սխառնմն ունենալու ցանկությամբ վառված՝ նա հետևյալ «ծավալուն» ծրագիրն և առաջարկում. «Միացյալ մանկավարժական պրոցեսը պետք ե յեղակետ ունենա կոնկրետ աշխատանքը և մասնակցությունը արտադրության մեջ, իսկ առանձին դիսցիպլինաների ծրագրերը պետք ե բղխած լինեն արտադրությանը մասնակցելու միացյալ պլանից և անհրաժեշտ ոժանդակ միջոց հանդիսանան յերևխաների մասնակցության պրոցեսն արտադրության մեջ ել աղելի կատարյալ դարձնելու, այդ արտադրության բարելավմանը հարկավոր ել աղելի կատարյալ պրոցեսներ, գծեր և վորակներ մշակելու համար»:

(Ս. Մ. Ֆրիդման—«Դաստիարակության սոցիալիստական վերակառուցումը և սլոխտեխնիկիզմը»):

Բայց ավելի ճիշտ և լուրջ են ընկ. կրուպենինայի առաջարկները՝ նա, ինչպես ասվում ե, հիմքից ե սկսում: «Գործարանի հասարակական կադմակերպություններն իրենց աշխատանքը պլանավորելիս սկսում են նրա մեջ մտցնել յերևխաների ուժը, վորպես իրենց աշխատանքի բաղկացուցիչ ելեմենտ: Ահա այն նորը, վոր կյանք ե մտցվում: Դժբախտաբար դա դեռ շատ քիչ ե: Դիչ ե այն պատճառով, վոր մինչև այժմ հանրագուտ աշխատանքը դպրոցի կյանքի մեջ մնում ե վորպես եպիզոդ: Գլխավորը ծրագրին ե, կրթական աշխատանքի ծրագրերը: Ինչ ել վոր լինի, նա պիտի անցվի: Դա հիմնականն ե Նրան ե յինքնարկվում ամեն ինչ» («Անցողիկ շրջանի մանկավարժություն» V Ժո-

դովածուից) — այսպես և ծաղրի յենթարկում ծրագրերն ընկ. Կրուպենինյան: Իսկ ահա թե ինչ և առաջարկում Կուսկենտկոմը. «Ամեն մի փորձ, վորի նպատակը կլինի դարոցական պոլիտեխնիկացումն անջատել դիտությունների և մանավանդ ֆիզիկայի, քիմիայի ու մաթեմատիկայի սխտեմատիկ հաստատուն յուրացումից, վորպիսի առարկաների ավանդումը պետք և կատարվի խստիվ վորոշված և ուշի-ուշով մշակված ուսուցման պլանների ու ծրագրերի հիման վրա և կիրառվի համաձայն խստիվ վորոշված դասացուցակներին, — վոչ այլ ինչ և, բայց յեթե պոլիտեխնիկ դպրոցի գաղափարի ամենակոպիտ ազավագումը»:

Ի՞նչ կա ընդհանուր Կրուպենինայի պոլիտեխնիկ դպրոցի և Կենտկոմի առաջարկների մեջ: Յեվ կամ ահա դարձյալ մի կտոր նույն հողվածից, վոր, ի միջի այլոց ասենք, մարքսիստ-մանկավարժների ընկերության նիստում 1930 թ. փետրվարին նրա յեկույթի սղագրում թյունն և:

«Մենք կարծում ենք, վոր արդեն ժամանակն է հանրակրթական մատերիալը յենթարկել արտադրական և հասարակական աշխատանքին: Յեկակես դարձնել վոչ թե հանրակրթական աշխատանքի ծրագիրը, ինչպես վոր մինչև այժմ եր, այլ հասարակայնորեն ոգտակար և արտադրական աշխատանքը: Գրելու, հաշվի և գրադիտության ունակություններն ի սպաս դնել այն գործերին, վորոնց կատարմամբ դրողվում են յերևիսաները: Թող չփորձեն ուսուցման դպրոցի պաշտպանները կրկին քողարկվել թեորիայի պաշտպանության տողայով մեղադրելով մեզ նեղ ոգտապաշտության, գործավորության և պրակտիցիզմի մեջ: Այժմ վոչ վոքի չի խարի այդ քողարկումը»:

Մենք թույլ չենք տա «ուսուցման հին դպրոցի պաշտպաններին վերեն չափով քողարկել» Կենտկոմի վորոշման «պաշտպանի» և մարգարեների տողայով: Բայց մենք անդադրում կմերկացնենք «ձախերին», վորոնք իրենց ցույց տալով պոլիտեխնիկ դպրոցի պաշտպանի դերում, փաստորեն քանդում են այն: Իսկապես Կրուպենինյան խոսում է դպրոցում կրթական գործը արտադրական և հասարակական աշխատանքին յենթարկելու մասին, իսկ Կուսկենտկոմն առաջարկում և՛ «ուսուցման և արտադրական աշխատանքի միացումը պետք է անցկացնել այն հիմունքով, վոր աշակերտների հասարակական արտադրական վողջ աշխատանքը յենթարկվի դպրոցի ուսուցման և դաստիարակչական նպատակներին»:

Ի՞նչ ընդհանուր բան կա Կրուպենինայի պոլիտեխնիկ դպրոցի և Մարքսի ու Լենինի դպրոցի մեջ:

Ավելի լավ կիրարկման արժանի հետևողականությամբ «ձախերը» քայլ առ քայլ քանդում են դպրոցի ըուրը ելեմենտները:

«Վերցնենք թեկուզ ուսուցման դպրոցի այնպիսի անբաժանելի ատրիբուտները, ինչպիսին է դասագիրքը, վորը փոխարինում եր ծրագրին, վորը դպրոցի ամբողջ իմաստության անոթն եր, առաջադիմության

ստուգելը,—անցար դասագիրքը, նշանակում է անցար այսօրն ինչ դասարանի կուրսը, իսկ այժմ նա անցյալի գիրկն է ընկնում» (վերև հիշատակված նույն զեկուլցի սղագրից)։

Իսկ Կենտկոմն իր վորոշման հատուկ հոգովածով—«Տարրական և միջնակարգ դպրոցի նյութական բազան»—առաջարկում է մի շարք միջոցառումներ, վորոնք պետք է ապահովեն դպրոցը դասագրքերով։ Նա առաջարկում է և՛ Պետպլանին, և՛ ԺՏԳԽ-ին, և՛ Լուսժողովմատին։ Եւ՛ արդունաբերական կոոպերացիային, և՛ իշխանության տեղական որդաններին ապահովել դասագրքերի արտադրությունը, վորոնց ընկ. Կրուպենինան արհամարհանքով անվանում է «դպրոցական իմաստության անոթ»։

Բայց մնում է ուսուցիչը։ Նրա հետ ինչպես վարվել։

«Պետք է յուրաքանչյուր չափահաս կոլտնտեսական մտածի մանուկների մասին, յուրաքանչյուրն ոգնի նրանց դաստիարակմանը։ Բայց վոչ թե իր սեփական յերեխաներին և վոչ իր միջոցներով, այլ յերեխաների խմբին, այն ել ինչպես հարկավոր է։ Խնդիրն այս է... Յեվ խնդիրն այն չի, վոր հնարվի աշխատանք, վոչ, այլ այն է, վոր աշխատանքը ճիշտ կերպով կաղմակերպվի, նրա հետ կապված, նրա հիման վրա անհրաժեշտ քանակով գիտելիքներ և ունակություններ տրվեն։ Ահա թե ինչու է կայանում խնդիրը... վոչ թե դպրոցական ուսուցիչն է պատասխանատու դրան, վոչ, այլ տնտեսվարը» (Շուլգինի «Անցողիկ շրջանի մանկավարժություն» հոգովածից, Վ՝ ժողովածու)։

Այսպես է աղավաղում և աղճատում Շուլգինը դպրոցի աշխատանքների մեջ, դաստիարակության գործի մեջ բանվորին, կոլտնտեսականին, ինժեներին, ագրոնոմին ներգրավելու ճիշտ միտքը՝ մեկուսացնելով «դպրոցական» ուսուցչին, վորն ուրիշ բան չի նրա համար, քան «ֆուլյարով քեռի», «ծածկոցով քեռի», «Վորեպան»։

Իսկ Կենտկոմի վորոշումն առաջարկում է «բարձրացնել ուսուցչի պատասխանատվությունը դպրոցական աշխատանքի վորակի համար, առաջ քաշելով և քաջալերելով նվիրված և իրենց գործը լավ հասկացող ուսուցիչներին»։

«Դպրոցի մահացման» թեորիան չափազանց ընդունելի դուրս չեկալ. նա սավառնում էր դպրոցների վրա, ժողկրթության որդանների վրա, Լուսաշխատավորների միության որդանների և գիտա-մանկավարժական աշխատանքների վրա, առանց արժանի քաղաքական գնահատության և հակահարված ստանալու։ Նա թափանցում էր պետական ուսումնական հիմնարկները։ Նա վարակում էր մանկավարժական յերիտասարդությանը։ Յեվ միթե զարմանալի չէ, վոր դպրոցին ցույց տրված մեթոդական տնքավարար ղեկավարման պայմաններում նա կյանքի յեր կոչում դպրոցական աշխատանքի առանձին կողմերի նկատմամբ թեթևամիտ «պրոթեկտյորական» վերաբերմունք։ Միթե զարմանալի չէ, վոր նա հեռացնում էր դպրոցի վորձի լուրջ հաշվառու-

մից և պոլիտեխնիկական հիմունքներով վերակառուցվող դպրոցի մանկավարժական պրոցեսի բոլոր մանրամասները խորացրած վերամշակումը:

«ՊՐՈՅԵԿՏՆԵՐԻ ՄԵԹՈԴԻ» ՄԱՍԻՆ

Կենտրոնը նշում և «Ժողկրթության որգաններում դպրոցական կադրերի և դպրոցի մեթոդական ղեկավարության կազմակերպման անբավարար դրությունը»:

Մեթոդական ղեկավարության անբավարարությունը հատկապես նկատելի չի պրոյեկտների մեթոդի որինակներում: Բավական եր, վոր պրոյեկտների մեթոդն ընկնել դպրոցի մահացման կողմնակիցների ձեռքը, վորպեսզի «նահանգն սկսեր գրել», յերևան գար այդ նույն մեթոդական խառնաշփոթությունը, խճճվածությունն ու պրոֆեկտորությունը, վորոնք դիմադրություն չհանդիպելով միայն քաջքում ելին դպրոցը և խանգարում դպրոցական պարապմունքների շատ-քիչ նորմալ ընթացքը:

Դպրոցական աշխատանքների մեթոդական ինստիտուտի հրատարակությունը լույս տեսնող «Պրոյեկտների մեթոդի ճանապարհին» ժողովածուի չորրորդ գրքի մեջ տեղավորված և Շուլգինի, այսպես ասած, գեներալ հոգվածը. «Պրոյեկտների մեթոդի նշանակությունն անցողիկ շրջանում»: Պրոյեկտների մեթոդի նշանակությունը վոչ թե դպրոցում, այլ հատկապես—անցողիկ շրջանում: Այլ կերպ Շուլգինը չի կարող. նրան լայնը են միայն մոլորակային մասշտաբները:

«Պրոյեկտների մեթոդն այժմ տարերայնորեն, հաճախ կյանք և մտնում, և չի կարող չմտնել: Ինձ թվում և, վոր ինչպես պոլիտեխնիկական դաստիարակություն և սկսում ծավալվել վոչ միայն դպրոցական և նախադպրոցական հիմնարկներում, նաև, առաջին հերթին հասակավորների մոտ, քանի վոր հատկապես այնտեղ ենք տեսնում պոլիտեխնիկական ալիքի ծաղկումն ու ընթացքը, այդպես ել պրոյեկտների մեթոդն իր լայնագույն ծավալումը կգտնի առաջին հերթին մեծահասակների մոտ»: (Ընդգծումներն իմն են.— Մ. Ն.): Հենց սա չի աշխատանքի բովանդակությունը մեթոդով փոխարինող սխալը: Ինչպես կարելի չի հավասարություն նշան դնել պոլիտեխնիցիզմի և պրոյեկտների մեթոդի միջև: «Պոլիտեխնիկական ալիքը հետևանք և մեր յերկրի սոցիալարություն իսկայական աճման, կուլտուրական պահանջներին, մասսաների ակտիվության աճման և այլն: Իսկ պրոյեկտների մեթոդը—դա դպրոցական աշխատանքի մեթոդներից մեկն և միայն, այն ել փոխ առած Ամերիկայի բուրժուական դպրոցից:

Պրոյեկտների մեթոդների համար մղվող պայքարը հավասարեցնելով պոլիտեխնիցիզմի համար մղվող պայքարին, Շուլգինը բնականաբար այդ մեթոդը դարձնում և պարտադիր և համատարած:

«Յեւս գտնում եմ, կարդում ենք նույն հոգւածում, վոր ուսուցիչներին վերապատրաստութեան ու վերավորակման մեջ ամբողջ աշխատանքն զգալի չափով պետք է կառուցվի պրոյեկտներին մեթոդի վրա»: Կամ «մենք պետք է կարողանանք մեր կուլտուր-լուսավորական աշխատանքը գործարանում կառուցել այնպես, վոր այդ կուլտուր-լուսավորական աշխատանքն արձագանգի կյանքի այն պահանջներին, այն գործնական փորձին, վոր գոյութեան ունի լայն բանավորական մասսաների մեջ: Իսկ դա նշանակում է, վոր մեր կուլտուր-լուսավորական աշխատանքը մենք պետք է կառուցենք պրոյեկտներին մեթոդով»:

«Պրոյեկտներին մեթոդից բացի վոչ մի այլ մեթոդ» հայտարարում է Շուլցինը: Մի խոսքով՝ աստված չկա, բացի աստծուց և նրա մարգարե Մահաձեդից: Մեթոդ չկա, բացի պրոյեկտներին մեթոդից և նրա մարգարե Շուլցինից:

Յեւ վայս համապարփակ դերը տրվում է մի մեթոդին, վորը մեր դպրոցի պրակտիկայում բացառիկ կերպով վոչ մի տեղ, վոչ վոքի կողմից ինչպես վոր հարկն է՝ չի ստուգվել: Ահա իսկական «մեթոդական պրոֆեկտորութեան»:

Այսպիսի վերաբերմունք դեպի պրոյեկտներին մեթոդը բնավ պատահական չէ, դա կապված է նրա հետ, վոր պրոյեկտներին մեթոդը գոգորդվում է դպրոցի և ուսուցչի դերի նվազեցման ամբողջ սխառման հետ (ազատ դասատախտակ, դասարանական խմբերի քայքայում, ուսուցման ստորադաս դեր և այլն), վոր պրոյեկտներին մեթոդի միջոցով մեր պրակտիկայի մեջ եր խցկվում դպրոցի մահացման թեորիան, ապացուցելը դժվար չի: «Բոլորովին ել պատահական չի, — գրում է Շուլցինը, — վոր հատկապես այժմ է իր ամբողջ ծավալով դրվում պոլիտեխնիկ դաստիարակութեան խնդիրը, բոլորովին պատահական չի, վոր հատկապես այժմ են մեղանից պահանջվում պոլիտեխնիկորեն պատրաստված մարդիկ: Ի՞նչ մեթոդներից մենք կարող ենք ոգտվել այս դեպքում: Հին մեթոդներից, յերբ ուսուցիչը պլանաչափ, սխառմատիկորեն ներգործում եր, իսկ աշակերտը յուրացնում վոչ չինչ դուրս չի գա, պրոյեկտներին մեթոդն է մեղ պիտանի մեթոդը, վորովհետեւ նրա հիմքում ընկած է ռեալ և կոնկրետ գործը»:

Ահա թե ինչի համար է պետք այսպես կոչված «պրոյեկտներին մեթոդը»՝ վորպեսզի ուսուցիչը «չներգործի» և աշակերտները չյուրացնեն:

Կամ ավելի պարզ ասած՝ «հին դասարանական սխառմը չի կարող հաշտվել պրոյեկտներին մեթոդի հետ, ընդհակառակը, նրանց միացման փորձերից վոչինչ չի դուրս գա: Բայց վորոշ լուրջ դպրոցի կառուցվածքն սկսում է ճեղքվել կարատեղներից, սկսում է բեկբեկվել. նա կիսորտակվի այն ժամանակ, յերբ մենք կհասնենք դարգացման յերբորդ փուլին, յերբ պրոյեկտները կդառնան յուրաքանչյուր տվյալ շրջանի շինարարութեան որգանական և անքակտելի»:

մասը, և յերբ նրանց կատարման համար պատասխանատու կլինեն ղոչ միայն ուսուցիչը, այլ և՛ տնտեսվարը, և՛ գուցե տնտեսվարներն առաջին հերթին, քանի ղոր պրոյեկտները պրոմֆինպլանի մի մասն են հանդիսանում: Ահա թե ուր ենք գնում մենք:

Պրոյեկտները մեթոդի միջոցով «կտարել» դպրոցը և ուսուցչին փոխարինել տնտեսվարով: Վնչ, մենք դեպի այդ չենք գնում, ղորովհետեւ կենսական ազդանշում ե ղտանդը, նախազգուշացնում «դպրոցի մահացման» հակաինինյան թնորիայից ըղիտդ «այսպես կոչվող պրոյեկտները մեթոդը ըտոր աշխատանքների հիմքում գնելու փորձերը փաստորեն տանում են դեպի դպրոցի քայքայումը»:

Շուրջինի և իր հետերգների «թեթե ձեռքով» գրեթե տեղական և կենտրոնական մանկավարժական ամբողջ գրականության մեջ «գլուխ բարձրացրեց» «պրոյեկտների մեթոդը» հատկապես այդպիսի ըմբռնումը, այսպիսի անփույթ և թեթեամիտ մեթոդական պրոժեկտորությունը: Այդ բանին ոժանդակեց և այն հանդամանքը, ղոր ժողովրթության գործի պատասխանատու որդանները ցուցաբերեցին մեթոդական անբավարար գրագիտություն, հայտարարեցին դպրոցի ներկա ղինակի թույլ ճանաչողություն: Ահա միքանի իլյուստրացիա:

Նիժնի-Նովգորոդի մանկավարժական ժուրնալից (№ 4 1931 թ.). «Այժմ դեռ պժվար ե նախատեսել, թե ինչ կերպաւանք կընդունի այդ կազմակերպությունը, սակայն պարզ ե, ղոր դասատախտակը, աշակերտների տեղավորումը դասարանում, դպրոցական պարագաները, աշակերտական կազմակերպությունները և այլն, կընդունեն նոր ձեեր, ղայն պրոյեկտներ կատարելու համար ավելի հատուկ ձեեր»:

Ինչպիսի ձեեր: Ինչձե ղվոթեցնել ուսուցչին՝ չտարով այդ «ուրիշ ձեերը»: Ինչձե քանդել մեկը, յերբ ամեն ինչ պետք ե յենթարկել պոլիտեինիցիզմին և դպրոցի ուսումնադաստիարակչական նպատակներին: Ինչձե համար—հայտնի չե:

Ուրիշ ժուրնալ. Լենինգրադի ժողկրթության մարդային բաժնի «Просвещение» (№ 4 1931 թ.) գրում ե. «Պոլիտեինիցիզմը անհամատեղելի յե ղոչ միայն դասարանական սխտեմի հետ, այլև նրա համար նեղ են նաև լաբորատոր սխտեմի ղրջանակները: Դպրոցի արտադրական պլանը պետք ե կազապարղի պրոյեկտները մեթոդի մեջ»:

Իսկ «Просвещение Сибири»-ն (№ 1 1931 թ.) ավելի առաջ ե քշել. առանց քաշվելու նա հայտաբարեց. «Աշկմին պրոյեկտ ե առաջադրում կամ խորհտնտեսությունը՝ այդ բանի համար ուղարկված ներկայացուցչի միջոցով, կամ գյուղի ուրիշ կազմակերպությունները (խրճիթ-ընթերցարան, գյուղխորհուրդ, կոոպերատիվ և այլն)»։ Ինչի յեն պետք Լուսժողկոմատի ծրագրերը, ուսման պլանները, ձիշտ մերդմանի «ճաշակն ե». յուրաքանչյուր դպրոցին պարապմունքի ծրագիր կտա խրճիթ-ընթերցարանը, տվյալ ղրջանի կոլտնտեսությունը, և թող այդ ծրագրով աշխատի դպրոցը:

Նույն այդ ժուրնալը գրում է. «Ուսուցիչը վերջնականապես ազատագրվում է «ուսուցչական» քարացած վիճակից, յերբ նա միայն ուսուցում և զիտելիքներ է հաղորդում»։ Ինչպես ասում են, կետին հասան։

Այս պրոժեկտորությունը ու խառնաշփոթությունը չի սահմանափակվում միայն ժուրնալներով։ Այս բոլորը, վոր ավելի վատ է, թափանցեց դպրոցի պրակտիկայի մեջ։

Ահա Ռակիտինսկու առաջին աստիճանի դպրոցի, Սրետենսկի և Լիպիտենսկի դպրոցների 1930—31 թ. հաշվետվությունը։ Բոլորն էլ հայտնում են, վոր դպրոցներն աշխատել են պրոյեկտների մեթոդով։

Բնորոշիչ են Գոլովինկովսկի առաջին աստիճանի դպրոցի հաշվետվությունները, վորտեղ, ի միջի այլոց, ասվում է. «Նոր ծրագրերը լրիվ չեն կիրառվել. առանձին թեմաների փոխարեն մշակվել են որովհետևսական «պրոյեկտներ»։ Թե վորոնք են այդ «որովհետևսական պրոյեկտները», վոր փոխարենել են ծրագրերին, հայտնի չի։

Կամ Մարելեցկի դպրոցի հաշվետվությունից. «Նոր ծրագրերը լրիվ չեն մշակվել, զլխավորապես ուսման յերբորդ և չորբորդ տարիները. նրանք ընդարձակ են և բացի այդ՝ շատ ժամանակ է գործադրվել տնտեսական~քաղաքական կամական իտաների և ծրագրով չնախատեսված պրոյեկտներին մշակման վրա։ Պարզ չի, վոր այսպես կոչված «պրոյեկտները» քշել են կայուն ծրագրերին, ուսման պլաններին և հանդեցրել այն բանին, վոր մի շարք դպրոցներ աշխատել են «առանց դեկի ու առաջատի»։

Մենք խոսեցինք դպրոցի մահացման թեորիայի լայն ազդեցություն և մեթոդական դեկավարություն անբավարարություն մասին։ Այդ հանգամանքն ազդել է նույնիսկ Լուստոգլոմատի մի շարք պաշտոնական մատերիալների վրա։ Իզուր չե, վոր Լուստոգլոմատի կոլեգիայի 15|IX նիստն առաջարկում է դպրոցական, ուսումնա-մեթոդական և կադրերի սեկտորներին վերանայել հրատարակված բոլոր ծրագրա-մեթոդական դեկումենտներն այն առումով, վոր նրանք համապատասխանեցվեն Կենտկոմի վորոշման հետ։

Նման սխալ գրույթներ կան նաև գործարանային յոթնամյակների 1930 թ. ծրագրերի բացատրական նամակի մեջ։ Ահա թե ինչու Լուստոգլոմատի կոլեգիան «Համկոմկուսի(բ) Կենտկոմի» տարրական և միջնակարգ դպրոցների մասին յնդած վորոշման կատարման համար պրակտիկ միջոցառումների» վերաբերյալ իր 15|IX վորոշմամբ առաջարկում է—«մասսայական դպրոցների մեթոդական դեկումենտները վերանայելիս նկատի ունենալ, վոր գործ. յոթնամյակների 1930 թ. (21|VII 1930 թ.) ծրագրի ներածական նամակը պարունակում է մի շարք սխալ ցուցումներ, այդ պատճառով էլ նա չի կարող հանդիսանալ մեթոդական դեկավար հրահանգ»։

Այս նույն սխալ դրույթները կան նաև ուրիշ պաշտոնական մատերիալներում և մասնավորապես մանկավարժական կրթություն

վերաբերյալ մատերիալներում: „3а педагогические кадры“ ժուրնալի 1931 թ. № 3-ի «Մանկավարժական կրթության համառոտական կոնֆերանսի առթիվ» դեկավար հոդվածում հետևյալ դրույթն է տրվում. «Թվում է, թե ուսուցման ակտիվ մեթոդների կիրառման, անընդհատ արտադրական պրակտիկայի և պրոյեկտների մեթոդի դորժադրման խնդրում մանկուհներն ու մանկտեխնիկուսները պետք է առաջնակարգ հիմնարկներ հանդիսանային կադրեր պատրաստող ամբողջ սխոտեմի մեջ»: Կամ նույն ժուրնալի (1931 թ. № 4) «Մարտականորեն պատրաստվել նոր ուս. տարվա համար» խորագիրը կրող մի այլ դեկավար հոդվածում կարդում ենք. «Միայն պրոյեկտների մեթոդի, նրա պրակտիկ կենսադործման համար մղվող համառ պայքարի շնորհիվ արագորեն առաջ կընթանա ուսանողության պոլիտեխնիկացման և կոմբատիբրակուլյան խնդիրների հաջող լուծումը»: Նույնիսկ մանկտեխնիկուսների և մանկուհների տիպական ուսուսնական պլանների մեջ շեղումում և Վամբողջ կարևորությունը աշխատանքը պրոյեկտների մեթոդին փոխանցելու մեջ է: Ել թնչ դարմանալի բան է, որ վեր յերբ մանկհիմնարկի աշխատանքները չենին տարվում պրոյեկտների մեթոդով, դա համարվում էր պոլիտեխնիկական դպրոցի հիմքերը քանդող հանցագործություն: Նույն այդ ժամանակ պրոյեկտների մեթոդը, հատկապես իր աղավաղված ձևով, առանց փորձով ստուգվելու դուգորդված դպրոցի մահացման թեոբիայի հետ՝ անխուսափելիորեն բլխեցնում էր ուսուսնական ու դաստիարակչական նպատակները յենթարկում դործարանի արդիինպլանին. և դպրոցը դործարանի վերածելու փորձերը՝ այս կերպ խանգարելով կայուն ուսման պլաններով և ծրագրով աշխատող դպրոցի բոլոր պահանջները և ուսուցչին «բիտոդի» դեր հատկացնում դպրոցում: Դպրոցական առանձին հաշվետվությունները հատկապես պայծառ կերպով են ցույց տալիս այդ բանը: Ինչի մասին կուղեք այդ հաշվետվությունները գրում են, իսկ այն մասին, թե ինչպես են անցել ծրագրերը, ինչպես են աշակերտները առաջադիմությունը, ինչ նոր դիտելիքներով և ունակություններով են նրանք գրնվել, ինչպես և լայնացել նրանց պոլիտեխնիկական շրջահայացքը, ինչ դրության մեջ և տեխնիկական դարգացումը, վորքան են նրանք քաղաքականապես հասունացել—դրանց մասին կամ լուում են և կամ լավագուցն դեպքում խոսում կողմնակի կերպով՝ վորպես յերրորդական մի գործի մասին: Այս բոլորը հաճախ փոխարինվում են «պրակտիկ դործերով», «կենսական պրոյեկտներով», վորը «հավաքել» է դպրոցը դեպքից-դեպք, առանց յերեք հաշվի առնելու նրանց կրթական ու դաստիարակչական նշանակությունը, առանց յերեխաների ուժին ու հետաքրքրությանը ուղադրություն դարձնելու, առանց դպրոցի ծրագրին որդանապես չաղկապելու:

Մենք կանգնած ենք աղտեղությունից «մեթողական դաշտը մաքրելու» խնդրի առաջ: Այդ մեզ հարկավոր է և նրա համար, վոր կարողանանք հաջող կերպով պայքարել դպրոցը հետ քաշողներին, դպրոցական աշխատանքի նոր մեթոդներին ամրացմանը խանգարողներին դեմ, վորոնց մասին խոսում է կուսակցության Կենտկոմը: Կենտկոմի վորոշումը պետք այսպես հասկանալ. պրոյեկտների մեթոդը Կենտկոմը դին է շարտում», հատկապես նրա համար, վոր այդ մեթոդն այժմ հանդես է գալիս վորպես մեթողական պրոֆեկտյորության ամենաընդունալի արտահայտություն, զուգորդվում է դպրոցի մահացման թեորիայի հետ: Բայց այդ դեռևս չի նշանակում, թե դպրոցում չպետք է աշխատել ակտիվ նոր մեթոդներով: Ընդհակառակը, Կենտկոմն ասում է. «Գործադրելով խորհրդային դպրոցում ուսուցման զանազան նոր, ակտիվ մեթոդներ, վորոնք կարող են ոժանդակել սոցիալնաբարության համար գործունյա և ձեռներեց մասնակիցներ դաստիարակելու գործին»: Այնպես վոր ասել, թե սովորողների ակտիվ ինքնագործունեությունն ոժանդակող, պարապմունքները զբաղիչ և կենդանի դարձնող, ամբողջ դասարանը հետադոտական ստեղծագործ աշխատանքի ներքաշող, ջանք ու հտաքրքություն դարձնող նոր մեթոդներ հարկավոր չեն մեր աշխատանքներում՝ այդ կարող են ասել միայն խոսքի հին դպրոցի թունդ կողմնակիցները:

Ներկայումս ամենակարևորն այն է, վոր որին ահելի է հենարանային (опорный) դպրոցների ջանքերով կազմակերպենք նոր մեթոդներով կատարված աշխատանքի փորձի ստուգումն՝ առանձին դպրոցների իրական նվաճումները մասսայական սեփականություն դարձնելու համար:

Հասյա Խնչպես վարվել պրոյեկտների մեթոդի հետ: Լուսժողկոմատի Կուլեզիան արդեն հիշատակած իր 15 IX վորոշման մեջ այսպես է լուծում այդ հարցը. «Ներկայումս մասսայական դպրոցում «ուսուցման զանազան նոր մեթոդներ» գործադրելիս մենք պետք է վճռականորեն հրաժարվենք այսպես կոչվող պրոյեկտների մեթոդի մասսայական կիրառումից, սահմանափակվելով նրա պահպանությամբ միայն այն առանձին դպրոցներում, վորտեղ նա՝ տարրական և միջնակարգ դպրոցների մասին Կուսկենտկոմի սեպտեմբերի վորոշման սկզբունքներից բղխող դպրոցական խնդիրներում տվել է բացարձակապես զրական արդյունք և կազմակերպել այդ մեթոդի՝ խորհրդային դպրոցում կիրառելու փորձնական ուսումնասիրություն»:

ՄԵՐ ԴՊՐՈՑԻ «ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆԸ»

Նոր մեթոդները հարկավոր են նաև նրա համար, վոր նրանք հանդիսանում են կարևորագույն զենք մեր դպրոցի «հիմնական թեություն» դեմ մղվող պայքարում:

Տարրական և միջնակարգ դպրոցների մասին Համկոմկուսի Կենտրոնի վորոշման մեջ հատուկ նշանակություն է տրվում հանրակրթական գիտելիքների մակարդակը բարձրացնելուն, վորոշցով դպրոցը դիտում է սովորողներին: Կենտրոնի վորոշումն ամբողջովին հագեցած է դպրոցի պոլիտեխնիկական «լայն և արագացրած» շինարարության շահերով: Հենց դրանով է բացատրվում, վոր Կենտրոնը լացառիկ նշանակություն է տալիս տարրական և միջնակարգ դպրոցների միջոցով գիտելիքների հաստատուն և կայուն միևնույն ապահովելու խնդրին, քանի վոր, ինչպիս յարձանագրում է Կենտրոնի վորոշումը, դպրոցի պոլիտեխնիկացման անջատումը «գիտություն սխտեմատիկ և հաստատուն յուրացումից» պոլիտեխնիկական դպրոցի գաղափարի ամենակոպիտ աղավաղում է հանդիսանում: Լենինը, ինչպես և Կենտրոնն իր վորոշման մեջ, բազմիցս շեշտումն են գիտություն «հիմունքները»: Դա ամենայն լրջությունը դնում է գիտության, կուլտուրայի և գրագիտության սկզբնական տարրերի հիմնական և կայուն յուրացման խնդրին՝ սկսած ուսուցման առաջին տարվանից: Այստեղ ամեն ինչ պետք է սխտեմի վերածվի: Այստեղ ամեն մի ողակ պետք է պահի մյուսին: Ահա թե ինչու արհամարհանքն անգամ այնպիսի «փոքր» բաների, ինչպես գրություն մեջ կետագրական նշանների ճիշտ դասավորումը, ինչպիս ուղղագրությունը, բերանացի արագ հաշիվ անելը և այլն, հակասում է «գիտության հիմունքները» յուրացնելու այս գրույթին: Իսկ այդպիսի արհամարհանք տեղի ունի վոշ միայն պրակտիկայում: Միքանի տեսաբան մանկավարժների մոտ այդ արհամարհանքը վեր է ածվել նույնիսկ սկզբունքի: «Հինգ ամիս առաջ,— գրում է Շուլցինը («Հնգամյակը և ժողկրթության խնդիրները»),— ինձ մոտ բերին մի ուղղագրական գիրք և խնդրեցին առաջաբան գրել: Այդ գիրքը հետաքրքիր է, նրա մեջ կա մեծագույն արժեք ունեցող մատերիալ: Բայց նրա ներածական հոգվածում գրված էր,—հնգամյակում մենք պետք է հասնենք այն բանին, վոր դպրոցում սովորող յերեխաները գրեն անսխալ: Շատ լավ, ասացի յես, յեթե ցանկանում եք, յես այդ գրքի համար առաջաբան կգրեմ, բայց իմացեք, վոր յես այս գրույթը կանվանեմ անմիտ, ֆլասակար և անպետք... անգրագիտության դեմ պետք է պայքարել, բայց ամեն տեսակ անգրագիտության և առաջին հերթին քաղաքական: Բայց պետք է ձգտել հասնելու անսխալ գրագիտության. կարծում եմ, վոր վոշ»: Սա անհեթեթություն է, անմտություն, ծաղր, բայց փաստ է: Այսպես էր գրվում «գիտական» գրքերի մեջ: Մենք պետք է դեն շարտենք այս գրույթը: Մենք պետք է պայքարենք բարձր գրագիտության դպրոցի համար՝ նշելով, վոր այնտեղ, ուր կա ճիշտ կետագրություն, ուղղագրություն անսխալ գրություն, այնտեղ կա և նյութի լավ տիրապետումն ու մտքի մեծ դիսցիպլինա և, հետևաբար, անխնայ, մեծ նախադրյալներ քաղգրագիտության համար:

Լուսժողկոմատի տրամադրություն տակ կան միջնակարգ դպրոց-

ներն ավարտածներն գիտելիքների մակարդակի միջանի տարվա ուսումնասիրություններն Այդ տվյալները հաստատում են, թե վերջան ժամանակին եր կենտկոմի վորոշումն ազդանշում դարոցի կրթական աշխատանքին մեծագույն ուշադրություն նվիրելու անհրաժեշտությունը։ Մասնաշխատական դարոցում նույնիսկ կարևորագույն գիտելիքներն դրությունը չափազանց անբավարար են։ Առանձին գիտելիքներն տապալման բնույթի ավելի մանրագնին ծանոթությունը ցույց են տալիս դարոցական գործի ավելի կամ պակաս ընդհանուր գեֆեկտները, վորոնք ամեն գնով պետք են վերացվեն, կենտկոմի մատնանշած «հիմնական թիրությունը» վճռականորեն և արագ լիկվիդացիայի յենթարկելու համար։

Միջնակարգ դարոցում սովորողների գրականության և ուսաց լեզվի աշխատանքները ցույց են տալիս, վերպես կանոն, թույլ դրագիտություն, կետագրության անվարժություն, թեմա մշակելու անկարողություն և գրական թույլ դարգացում։ Հասարակագիտության վերաբերյալ, վորպես ընդհանուր յերևույթ, հետադրությունն արձանագրեց պրիմիտիվ մտեցում հասարակական անցուղարձին, լավագույն դեպքում գրքային, ձեական գիտելիքների առկայություն, ընթացիկ քաղաքական հարցերի թույլ հասկացողություն։ Մաթեմատիկայի աշխատանքները, բացի իրենց ծայրահեղ անփութ և անմաքուր լինելուց, ցուցաբերում են բավարար տեխնիկական ունակությունների բացակայություն, առանձին մաթեմատիկական կանոնների՝ գործնական կյանքում ունեցած նշանակությունը չըմբռնելը, վորը հատկապես ցայտուն կերպով ցույց են տալիս տարածական պատկերացումների բացակայությունը, յերկրագագիական խնդիրների չհասկանալը, գծագրեր կազմելու անկարողությունը և այլն։ Ֆիզիկայի և քիմիայի վերաբերմամբ, վորպես կանոն, առկա յե ֆիզիկայի որենքները և քիմիական ֆորմուլաները արտադրական այս կամ այն ալոցեսների և բնական յերևույթների բացատրության նպատակով կիրառելու անճարակություն։ Բացառիկ կերպով թույլ են աշխարհագրական տեղեկությունները և կատարյալ խառնադրություն և տիրապետում պատմական փաստեր իմանալու խնդրում։ հաճախ ֆրանսական Մեծ հեղափոխությունը ժամանակով նույնացվում և Պարիզի կոմունայի հետ, իսկ դեկաբրիստների ապստամբությունը շփոթում են Մոսկվայի 1905 թվի դեկտեմբերյան ապստամբության հետ։ Ել ուր մնաց թե հասկանան պատմական դեպքերի սոցիալ-քաղաքական նշանակությունը կամ ուր մնաց պատմական մատերիալիզմը։

Ձեռք բերված բոլոր գիտելիքները բնորոշվում են իրենց կցկռտությամբ, անկասկռությամբ և ծայրահեղ մակերեսայնությամբ։

«Հանրակրթական գիտելիքների անբավարար ծավալը» այս ընդհանուր մեկնաբանումը յերևան և հանում դարոցական աշխատանքի այն բացերը, վորոնք զինաթափ են անում մեր դարոցին գիտելիքների համար մղած իր կռվում։ Դա ամենից առաջ կայուն ծրագրերի

ուսումնական պլանները և խոստորեն սահմանված դասատախտակի՝ հաճախակի խախտումն է: Իդուր չեն կենտկոմը շեշտում այդ հանգս-
մանքի վրա: Իսկոյցը նույն գործարանն է: Աշխատանքի նորմալ կար-
գը անխիբ խանդարելով չի կարելի գործարանի արդֆինպլանի կա-
տարումն ապահովել: Իսկ հատկապես միջնակարգ դպրոցում դա-
սատախտակի անսպասելի խախտումը տարածված յերևույթ է: Պայքա-
րում են գործարանի արդֆինպլանի համար, այդ նույն ժամանակ
աշակերտների միջ մեծագույն արհամարհանք դաստիարակում հան-
դեպ դպրոցի «արդֆինպլանի», իրենց սեփական «արդֆինպլանի»: Իս
անպատասխանատվություն չէ: Պետք է վերջ տալ այնպիսի կար-
գին, յերբ դպրոցական նորմալ պարապմունքներն ընդհատվում են
ուսումնական պլանով և դասատախտակով չնախատեսված զործերով:
Պետք է ուժեղ կերպով հարմածել նրանց, վորոնք պատրաստ են ա-
մեն տեսակ մեղադրանք առաջադրելու ուսուցչին միայն նրա համար,
վոր նա չի ուզում իր աշակերտներին դասատախտակով սահմանված
պարապմունքներից ազատել վորևե ուրիշ աշխատանքի համար, թե-
կուդ այդ լինի հասարակական աշխատանք: Յեվ ընդհակառակը՝ պետք
է խիստ պատժի յենթարկել այն ուսուցչին, վորը թերանում է իր
պարտականությունների մեջ, խանդարում է ուսման պլանը, դասա-
տախտակը, ձգտում է դասն զրադեցնել այնպիսի աշխատանքով, վոր
ինքը քիչ սովորեցնելու, դաստիարակելու և ճերարդելու հարկ ունե-
նա: Վստորեն սահմանված դասատախտակը՝ կայուն
և սիստեմատիկ գիտելիքներ համար մղվող պայ-
քարի կարևորագույն ելևմենտն է:

Այսպիսով ուսուցչությանը ցույց տրվող մեթոդական թույլ ղեկա-
վարությունը: Իրոք, չնայած նրան, վոր մեր մասնագիտական դպրոցը
նախահեղափոխական բուրժուական դպրոցից անհամեմատ ազելի լայն
հասարակական քաղաքական շրջահայեցողութուն է տալիս, այնուա-
մենայնիվ զարմացում է գիտելիքների նվաստ կոնկրետութունը և
աշակերտների անկարողությունը՝ ձեռք բերած գիտելիքները պրակտի-
կայում գործադրելու խնդրում: Հետևաբար, խնդիրը վոն այնքան
ներանումն է, վոր դպրոցը քիչ է մասնակցում յերկրի հասարակական-
քաղաքական կյանքին ու սոցլինարարությանը, վորքան նրանում,
վոր այդ ամբողջ աշխատանքը մեթոդապես չի ոգ-
տադործվում: Դպրոցական ուսմանը կենսական
բնույթ տալու և դրանով իսկ գիտելիքներն իրոք
արմատացնելու նպատակով: Կարծեք թե յերկու գուգահեռ
պրոցեսներ տեղի ունեն, դպրոցի հասարակական աշխատանքը, նրա
կապը կյանքի հետ՝ մի կողմից և ձևական ուսուցումը՝ մյուս կողմից:
Կամ մաթնատիկական թույլ ունակություններ, մաթնատիկական
աշխատանքի վնթիւթյուն, ուղղագրական անդրագիտություն այն
ժամանակ, յերբ, վորպես կանոն, մեր դպրոցի աշակերտները, հատկա-
պես նրանց ախտիւր, շատ ծանրաբեռնված են, հաճախ նույնիսկ

ուժասպառ են լինում: Այդ բոլորը մեզ չեն ասում, վոր դպրոցական աշխատանքն այնպես անշնորհք է կազմակերպված, վոր չնայած ծանրաբեռնվածությամբ, յերեխաները կամ քիչ են վարժվում, քիչ գրում, կարդում և հաշվում կամ, վոր ավելի հաճախ է տեղի ունենում, այն աշխատանքը, վոր նրանք կատարում են, չի ստուգվում, չի վերլուծվում, ուշադրությունը սխալների վրա չի բևեռվում, վորպեսզի ուսպահովվի աշակերտների հետագա դարգացումը:

Ձե վոր հազիվ գտնվի աշխարհում մի դպրոց, վորն իր ուսումնական և դաստիարակչական աշխատանքի համար այնքան շնորհակալ մատերիալ ունենա, վորքան մեր դպրոցը: Մեր յերեխաները շատ բան են դիտում: Մեր յերեխաները «սարի չափ բան են դրսւմ», վորպես հետևանք դործարանի ու կոլխոզի հետ ունեցած շփման, արտադրական և բնագիտական եքսկուրսիաների, ինչպես և ամեն տեսակ հասարակական «գործերի»: Վերջապես մեր յերեխաներն իհայտ են բերում իրենց հասարակական ակտիվությունը պիտներ շարժմանը, զանազան ինքնագործ խմբակների, դպրոցական ժողովներում, պատիլրագրին և այլն մասնակցելով: Բոլոր այս դեպքերում վորքան հաշվարկումներ են արվում, նոր բացահայտումներ մտցնում, ձեռք են բերվում նոր «իրերի» և «յերևույթների» ծանոթություններ. հաշվետվություններ, պլաններ, թեղիսներ գրվում, ճառեր արտասանվում, դրույցներ տեղի ունենում: Կրկնում ենք, այդ բոլորը կարող եր ծառայել վորպես բացառիկ կենսական և, հետևաբար, մանկավարժական դաստիարակչություն ամենից ավելի նպատակահարմար մատերիալ ուսումնական աշխատանքների համար: Իսկ ի՞նչպես է իրականում: Իրականում այս ամբողջ մատերիալը սխտեմի չվերածվելով, ուսումնական կայուն պլաններին ու ծրագրերին չենթարկվելով, մեթոդապես և ձևակերպելով, միշտ միայն կորչում է, այլ և հաճախ վորպես ծանր բեռ ճնշում է աշակերտներին և ոժանդակում ձեռք բերված գիտելիքների անկապությունը, կըտրվածությունը և արտակարգ մակերեսայնությունը:

Դրա դեմ պետք է պայքարել: Բայց ի՞նչպես. վերադառնալ դեպի հին սխուրաստիկ դպրոցը, վորտեղ ուսումնական ամբողջ մատերիալը քաղվում է միանգամ ընդմիշտ կայունացած դասագրքից, վորտեղ կուրսի սխտեմատիկան, կայուն ծրագրերը, ուսումնական պլաններն ու դասատախտակը ծառայում են յերեխաների ստեղծագործական ամեն տեսակ ակտիվիզմը խեղդելու և նրանց՝ կյանքից ու դասակարգային պայքարից կտրելու գործին: Հասկանալի՞ յե, վոր վրէժն Դա ամենավտանգավոր, ամենառեակցիոն գաղափարն է:

Իր ամբողջ սրությունը ցցվում է մեր դպրոցական աշխատանքների մեթոդիկայի մշակման խնդիրը: Դպրոցը վերակառուցվում է պոլիտեխնիկական սկզբունքներով, կապվում է ձեռնարկության հետ, կազմակերպվում է բարձր խմբերի համար արտադրական աշխատանք,

իր ուսումնառ-դաստիարակչական աշխատանքի պրոցեսում լուծում է սոցիալիստական շինարարության մի շարք ընդհանուր խնդիրներ: Ինքնըստինքյան պարզ է, վոր դպրոցը չի կարող ապրել և աշխատել հին մեթոդիկայով: Հարկավոր է մշակել պոլիտեխնիկական դպրոցի աշխատանքի պայմաններին համապատասխանող մեթոդիկա և մշակել այն՝ հենված առաջավոր պոլիտեխնիկական դպրոցների աշխատանքի փորձի մանրակրկիտ ուսումնասիրության վրա, վորպեսզի մասսայա-կան ուսուցչին տրվեն միանգամայն կոնկրետ մեթոդական նյութեր, կրթական աշխատանքը դաստիարակությանը շաղկապելու մեթոդիկա, աշակերտների արտադրական և հասարակական աշխատանքի մեթո-դիկա, աշխատանք, վորը պետք է յենթարկված լինի դպրոցի ուսում-նական և դաստիարակչական նպատակներին:

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Սխալ կլինի կարծել, թե մեթոդական այդ նյութերը հնարավոր կլինի տալ միայն «վերեից»՝ Լուսժողկոմատի և լուսբաժինների մեթո-դական որոշանքների միջոցով: Վնչ, նոր մեթոդիկան ամենից առաջ կատեղծվի պրակտիկ-մանկավարժների ջանքե-րով:

Այս ուսումնական տարին, վորի մեջ հենց նոր մտանք, կանցնի Կենտկոմի վորոշման իրացման պայքարի դրոշի տակ: Այդ նշանակում է, վոր ուսուցչությունը քննադատական վերանայման կենթարկի դպրոցի անցյալ տարիների ամբողջ աշխատանքը, վորպեսզի ներկա տարում, ինչ գնով էլ լինի, ապահովի առաջխաղացումը ներկայիս վճռական ուղղություններով, բարձրացնի դպրոցական աշխատանքի վորակը՝ չմոռանալով, վոր «պոլիտեխնիկ դպրոցի շինարարության ներկա ետապում դպրոցական աշխատանքի համար մղվող պայքարի հիմնական ողակը դպրոցի «հիմնական թերության» լիվիդացիան է» (ԼԺԿ Կոնգրեսի 1931 թ. 15 IX վորոշումից), այսինքն հանրակրթա-կան գիտելիքների մակարդակի բարձրացումը:

Մեն-մենակ առաջ շարժվել այս դեպքում անկարելի չէ (այն էլ արագորեն, ինչպես այդ պահանջում է իրադրությունը), համենայն դեպս ավելի դժվար է: Յեւ «մեխը» ներկայումս այն է, վոր կադավակերպվի մանկավարժական գործի մասսայական կուլեկտիվ փոխանակություն պարզակերտերն և պլանա-չափ աշխատող ստորին մեթոդական միավորներին մի-ջոցով:

Առաջին աստիճանի դպրոցի ուսուցիչների շրջանային և յենթա-շրջանային մեթոդական միավորումներ, վորոշ դիսցիպլինների ուսու-ցիչների միավորումներ, ցիկլային հանձնաժողովներ, վորոնք հրահան-գիչների և փորձնական դպրոցների ղեկավարությամբ սխտեմատիկո-րեն հավաքվում են, հանրագումարի բերում ուսումնական ծրագրերով,

իրենց դպրոցական ուսումնա-արտադրական պլանով և այլն կատար-ված աշխատանքի վործը—այս և ուսուցիչներին վորակը ընթացքի մեջ՝ բարձրացնող և միևնույն ժամանակ դպրոցական ամբողջ դասը-վածն առաջ մղող լավագույն միջոցներից մեկը, այնչափով, վորչա-փով վորոշ առաջավոր դպրոցների նվաճումները դառնում են բոլորի սեփականութուն և մի մասի սխալներն ուղղվում ուրիշներին կողմից։ Ուսուցիչների հասարակական աշխատանքը ներկայումս պետք և ուղղա-վել պիտի որպես այդ մեթոդական միավորումներին մեջ և նրանց գե-կավարութեամբ աշխատելու ուղղութեամբ, նկատի ունենալով, վոր սոցիալիստական շինարարութեան մեջ դպրոցի աճող նշանակութեան պայմաններում ուսուցչին աշխատանքը պիտի խնդիր կանգնեցնեն՝ բնագավառում հասարակական-քաղաքական մի խոշոր խնդիր և։ Մանրամասնել ուսուցչին ուրիշ հասարակական աշխատանք-ներով, վորոնք անմիջական կապ չունեն նրա դպրոցական աշխա-տանքներին հետ—այդ վոչ միայն աննպատակահարմար և, այլ ուղղակի՝ հանցագործութուն։

Զի վոր մեր ուսուցչութեան շարքերը վերջին տարիներում խորա-ցել են տասնյակ հազարավոր նոր, յերիտասարդ մանկավարժներով, վորոնք չունեն մանկավարժական աշխատանքի վործ, չեն տիրապե-տում բավարար ծավալով գիտելիքներին։ Դրա համար էլ մեթոդական միավորումներին գերն ափելի ևս մեծանում և։ Նրանք են, վոր պետք և ուսուցչութեան վորակի բարձրացման բոլոր աշխատանքների կազմա-կերպիչը հանդիսանան, հատկապես հեռակա ուսուցման, հատկապես ինքնագաղաղման միջոցով։ Նրանք են, վոր պետք և իրենց վրա վերցնեն կազմակերպելու ուսուցիչներին ծանոթացումն արտադրու-թեան հիմունքներին հետ դործադրանում, խորհանդեսում, ՄԿՏ և կոլտնտեսներում՝ (Կենտկոմի վորոշումից)՝ կարճատև և քսկուրսիաների միջոցով, արտադրական պրակտիկայի միջոցով, արտադրական և քս-կուրսիաների միջոցով, համապատասխան տեխնիկական գրականու-թեան միջոցով, ինժեներներին, տեխնիկներին, վորակյալ բանվորներին և կոլտնտեսականների հետ զրույցներ կազմակերպելու միջոցով։

Կենտկոմը պարտավորեցնում և ժողկրթութեան ղեկավար աշխատանքի բնագավառում գործող բոլոր կոմունիստներին՝ կարճ ժա-նակվա ընթացքում տիրապետել դպրոցական աշխատանքներին մեթո-դական կողմին։ Իր ժամանակին կոմունիստ-անտեսվարների առջև ընկ. Մտալինը խնդիր դրեց տիրապետել դործի տեխնիկային, արտա-դրութեան մանրամասներին նրա համար, վորպեսզի կարողանան շնորհ-քով ղեկավարել։ Այժմ այդ խնդիրը դրված և ժողկրթութեան բնա-դավառում աշխատող կոմունիստներին առաջ։ Իսկ մանկավարժական դործին մեթոդիկային տիրապետել կարելի չե միայն թեորիայի ու պրակտիկայի միացմամբ։ Մանկավարժական աշխատանքներում գաղն-վող կոմունիստը չի կարող այժմ չձեռնարկել Մարքսի և Լենինի թո-ղած ժառանգութեան, ժողկրթութեան խնդիրներին վերաբերող կուս-

վորոշումների ուսուցմասերու թիւնը: Միաժամանակ չի կարող լինել լուսաշխատանքներում գործող կոմունիստ առանց ուսուցչութիւն մեթոդական աշխատանքների անմիջական մասնակցութիւն, առանց մշտական, որգանական կապի դպրոցի հետ, ուսուցչութիւն, և հատկապէս նրա ակտիւի, հետ: Պետք է ուղղակի ասել, վեր լուսաշխատավոր-կոմունիստի և կոմյերիտականի հիմնական հասարակական կուսակցական աշխատանքը պետք է ընթանա դպրոցական «արտադրութիւն» մեջ, դպրոցական «գաղգյահի» մոտ, վորտեղ դպրոցի կոնկրետ փորձին, ուսուցչութիւն կենդանի աշխատանքին շփմելով՝ կոմունիստը կսովորի, թի ինչպէս պիտի կառուցել պոլիտեխնիկ դպրոցը և ինչպէս աստիճանի կուսակցական դիժը դպրոցական գործում: Ահա թի ինչու, ի միջի այլոց, Լուսժողկոմատի Կոլեգիան 15 IX իր վորոշման մեջ առաջարկում և միշտք միջոցառումներ (կոմմանկաւարժական բարձրագույն ինտերուստի կազմակերպում, Ժողկրթութիւն ղեկավար աշխատակիցների վերապատրաստութիւն և այլն), վորոնք պետք է ուժեղացնեն բարձրորակ կուսակցական-մանկավարժների կազմերը:

Դպրոցական աշխատանքի մեթոդական կողմին տիրապետելը նաեւ տուջ քաջված այն բանվորները պարտականութիւնն և, վորոնցով վերջին տարիներս ուժեղացել են դպրոցները վարչական կազմերը:

Բանվոր-առաջըքալվածն իրրե դպրոցի վարել՝ դա մեր մեծագույն նվաճումն է: Իր պրոլետարական համագութիւնում, անտեսվարական ռեալ մոտեցմամբ գործին, իր քաղաքական գգոնութիւնում բանվոր-վարելը միշտ կարողանում և մեծ արդյունքների հասնել դպրոցի նյութական դրութիւն ամրացման և նրա կապն արտադրութիւն հետ ուժեղացնելու գործում: Այժմ հարկավոր է լծվել դպրոցի հենց բովանդակութիւն աշխատանքներին, վորակավորվել մեթոդական՝ դպրոցական բոլոր աշխատանքների մեջ կուսակցական դասակարգային գծի ապահովութիւն հնարավորութիւնն իրապէս նվաճելու համար: Մեր թըընամիները բանվոր-վարչին հատկացնում են միայն «մեխեր վընտռողի» և վերանորոգումներ կատարողի դերն, իսկ մեղ համար նա իր դպրոցի քաղաքական մանկավարժական ղեկավարն է:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հասկանալի չի, վոր բացի դպրոցական մեթոդական միավորումներից անհրաժեշտ և կազմակերպել և ուժեղացնել մեթոդական որգանների ամբողջ ցանցն այնտեղ, վորտեղ նրանք դպրոցի մահացման «ձախ» թերիաների աղղեցութիւն շնորհիվ քայքայվել են: Ամենից առաջ՝ լուսբաժինների մեթոդական բյուրոները: Այդ մեթոդական բյուրոները՝ համալրվելով ավելի կայուն, փորձված մարքսիստ-լենինիստական կազմերով, և հատկապէս լուսաշխատավորներից գուրս յեկած կազմերով, պետք է աստիճանի կենտրոնի վորոշման կենսագոր-

ծուժը դպրոցական կյանքում և պայքարը մարքս-լենինյան մանկավարժության ամեն տեսակի թեորհական և գործնական ազավադունների դեմ: Այդ մեթոդական բյուրոնների գործը ներկայումս մոչայնքան ընդհանուր մեթոդական նամակներ կազմելն և (թեև այդ ելկարևոր է), վորքան իրենց, ուսուցիչներն մեթոդական աշխատանքների և նրանց մեթոդական միավորումների ղեկավարությունը:

Արտադրական և ազգային հատկանիշներով դաստիարակված այն ղեկավարությունը, վոր պահանջում է կենտկոմը, ձևք կրելով միայն աշխատանքի այնպիսի կազմակերպման հետևանքով, յերբ ժողկրթություն մեթոդ բյուրոնները կհենվեն ստորին ուսուցչություն մեթոդական միավորումների վրա և նրանց միջոցով՝ շրջանային հրահանգիչներն ու հենարանային դպրոցների վրա: Իսկ վորպեսզի կարելի լինի կազմակերպել ու ղեկավարել ուսուցչություն մեթոդական միավորումների աշխատանքները, մեթոդական բյուրոնները պարտավոր են հենց այժմ անցնել միանգամայն կոնկրետ աշխատանքի, վորի մասին նույնպես խոսվում է կենտկոմի վորոշման մեջ. ծավալել ստացիոնար և հատկապես շարժական պոլիտեխնիկ վոքը թանգարաններ, գրադարաններ, մանկավարժական ցուցահանդեսներ, մանկավարժական կարինետներ, պարբերական մամուլի ցանցը՝ նպատակ դնելով գըլխավորապես շարադրել և ցուցադրել լավագույն ու ուրինակելի դպրոցների աշխատանքի ընթացքում կուտակված փորձը նմուշները: Նման ձևով պարզակի կազմակերպված մեթոդական աշխատանքի մեջ է, վոր պիտի գլխավորապես դաստիարակվեն մարքս-լենինյան կադրերը, վորոնց մասին խոսում է կուսակցության կենտկոմի վորոշումը: Ժողկրթության մարմինների մեթոդբյուրոնների և մեթոդական սեկտորների գործունեությունն ամեն վերակառուցումը, թղթե ղեկավարությունից վործառնական կենդանի աշխատանքի անցումը մեթոդիկավորումների, պոլիտեխնիկ թանգարանների, մանկավարժական ցուցահանդեսների ու կարինետների և այլնի կազմակերպման գործում՝ կոժանդակի այն բանին, վոր մեթոդորդանների կողմից հրապարակվող ղոկումանտներն իրենց վրա այլևս չեն կրի Հափազանց ընդհանրություն, անկոնկրետության և դպրոցի իրական, ռեալ պահանջներից կտրվածություն կնիքը: Մեթոդբյուրոնները, վերջապես, կկարողանան ցուցումներ տալ մանկավարժական աշխատանքների բոլոր մանրամասների մասին, վորոնց կարիքն այժմ այնքան զգում է մասսայական դպրոցը: Դըպրոցի ուսումնական սարքավորման, ներքին կարգապահության, դըպրոցական ինքնավարության խնդիրները, առանձին դիսցիպլիններին վերաբերող ուսումնական մատերիալները, արտադրական եքսկուրսիաների մեթոդիկան, արհեստանոցներում և արտադրության մեջ տարվող աշխատանքի կազմակերպման մեթոդիկան — ահա այն խնդիրները, վորոնց լուծմամբ պետք է զբաղվեն մեթոդբյուրոնները՝ ան-

հրաժեշտաբար հաշվի առնելով դպրոցների առանձին խմբերի յուրա-
հատկությունները: Ահա թե ինչու, ի միջի այլոց, Կենտկոմն իր վո-
րոշման մեջ առաջարկում է վերանայել մասնավարժական խնդիրնե-
րով զբաղվող մեթոդական հրատարակությունները՝ նպատակ ունե-
նալով նրանց վերակի մեծական բարելավումը և դարձը յերեսով
դեպի դպրոցն ու նրա կարիքները, անհրաժեշտ համարելով, վոր
նրանց խմբագրական ապարատի մեջ ներգրավվեն ուսուցիչներ: Կենտ-
կոմը սրանով ընդծում է, վոր կենտրոնական և տեղական մանկա-
վարժական ժուրնալների ամբողջ ցանցն իրապես պետք է դառնա
«ուսուցչության մեթոդական տոճեռն ձեռնարկներ»:

Ժողկրթության մարմինների կենտրոնական խնդիրներէից մեկն էլ
ուսուցչության վերակի բարձրացման գործի կազմակերպումն է:
Այժմ այդ նրանց զլխավորապէս պարտականությունն է:

Դպրոցի վերակառուցումը պոլիտեխնիզմի սկզբունքներով, տե-
սական ուսուցման շաղկապումն արտադրական աշխատանքի հետ
գործարանում, հանրակրթական դիտելիքների կայուն միանմումն ապա-
հովելու անհրաժեշտությունը, կոմունիստական դաստիարակության
խնդիրները բացառիկ մեծ պահանջներ են առաջադրում դպրոցում
աշխատող ուսուցչությանը: Այդ պատճառով էլ ուսուցչության վորա-
կի բարձրացումը հրամայական անհրաժեշտություն է դառնում հա-
կապես կարճատե կուրսերում ու դպրոցներում պատրաստված տաս-
նյակ հազարավոր յերիտասարդ մանկավարժների համար: Կարելի չե
առանց վորեւէ չափադանցության ասել, վոր առանց ուսուցչության
վսրակի բարձրացման և խորացրած աշխատանքի չի բարձրանա և
դպրոցական աշխատանքի վորակը: Մեթոդական աշխատանքի կազմա-
կերպումից հետո դա ամենակարևոր ողակն է, վորին և հենց այժմ
պետք է ձեռնարկել: Այնինչ ուսուցչության վորակի բարձրացման
գործը տեղերում բացառիկորեն խղճով դրության մեջ է գտնվում:
Վորակի բարձրացման համար գոյություն ունեցող յերկայիս ինս-
տիտուտները, վորպես կանոն, գուրկ են մարդկանցից, միջոցներից և շեն-
քերից: Մասնայական ուսուցչությունը նրանց մասին տեղեկություն
չունի: Ժողկրթության որդանները նրանով չեն հետաքրքրվում: Հե-
ռակա մանկավարժական ուսուցման սիստեմը կազմակերպված չէ: Ման-
կավարժական ուսումնական այն հիմնարկները, վորոնց պարտակա-
նությունն է այդ ուսուցման կազմակերպումը, չեն զբաղվել դրանով:
Լավագույն դեպքում այդ խնդրին մոտեցել են ձևականորեն: Նույնիսկ
այն մանկավարժ ակտիվիստը, վոր ցանկանում է հեռակա գծով իր
վորակը բարձրացնել, գրկված է այդ անելու հնարավորությունից:
Ուսումնական նյութի չեն ուղարկում, կոնսուլտացիա չեն տալիս, գրա-
դարան չկա, մի խոսքով գործն անպիտան կերպով է կազմակերպված:
Յերեսով դառնալ դեպի դպրոցն ու ուսուցիչը՝ նշանակում է տվյալ
մոմենտում միաժամանակ դառնալ դեպի նրա մանկավարժական վորա-
կի բարձրացման ամբողջ սիստեմը: Ամենից առաջ հարկավոր է կաղ-

մակերպել յերկրային և մարդային ամուր կենտրոններ իդեմս ուսուց-
չութեան վորակի բարձրացման ինստիտուտներին և մանկրուհիներին ու
մանկտեսխնիկուհիներին կից հեռակա մանկուսուցման սեկտորներին:
Յուրաքանչյուր շրջանում պետք և հիմնել կոնսուլտացիոն կետեր (մանկ-
տեսխնիկուհիներում, հենարան դպրոցներում, փորձնական հիմնարկնե-
րում և այլն), վորոնք պատասխանատու պետք և լինեն հեռակայող-
ների վորոշակի, կայուն կերպով կազմակերպված խմբի աշխատանք-
ների համար: Պետք և ապահովել պրակտիկոսների լայն ցանցը լա-
վազույն դպրոցներին կից, վորոնցով առաջիկա տարում պիտի ապա-
հովել ամբողջ ուսուցչութունը: Պետք և ստեղծել թե ինքնուրույն
և թե ընդհանուր գրադարանների բաժանմունք հանդիսացող մանկա-
վարժական գրադարաններ, շրջիկ գրադարանների լայն ցանցով պիտի
ապահովել իրենց վորակի բարձրացմամբ գրողվող ուսուցչիչներին: Ըստ
վորում, այս բոլոր աշխատանքների ընթացքում պետք և վերջ տալ
այն հովասարեցմանը, յերբ բոլոր ուսուցչիչները վերապատրաստվում
են միասնական ծրագրով: Պետք և պարբերակի մոտենալ ուսուցչ-
չութեանը՝ նկատի ունենալով, վոր յեթեամբողջ ուսուցչութեանը կա-
րիք ունի պոլիտեսխնիկական վերապատրաստութեան, հաջաւայողութեան
ժամանակ մի խմբին հարկաւոր և առաջին հերթին հանրակրթական
վերապատրաստութեան, մյուսին՝ մեթոդական, յերրորդին՝ հասարա-
կական-քաղաքական:

ՌԵՍՈՒՄՆԱԿՍՆ ՄԱՍԻ ՓՈՆԵՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դա դպրոցի վորակի բարձրացման պայքարի կարևորագույն ո-
ղակն և: Այնինչ ուսումնական մասի վարիչը, վորպէս կանոն, միւր
դպրոցում գրադվում և ամեն ինչով, բացի ուսումնական մասից: Նա
և՛ դասերով և ծանրաբեռնված, և՛ դպրոցի տնտեսութեամբ և գրադվում,
և՛ մեթոդկարիներին կամ լուսարժնի մեթոդըւորոյի համար և ժաշ-
խատում: Նա ժամանակ չունի դպրոցի աշխատանքի վորակի համար,
ուսուցչիչների մեթոդ, աշխատանքների համար, ուսումնական պլանի,
դասադրքերի, դպրոցական արհեստանոցների համար, արտադրութեան
մեջ կատարվող աշխատանքի և այլնի համար հաշիվ տալու: Պետք և
վերջ տալ այս անորոշութեանը և միջնակարգ դպրոցն ապահովել
բոլոր այլ աշխատանքներից իրապէս ազատ, լով վարձատրվող, ման-
կավարժական դործում փորձված, քաղաքականապէս մեղ մոտ կանդ-
նած, մեծ կրթութեան ունեցող ուսումնական մասի փոխվարիչներով:
Պետք և լայն կերպով ծավալել այդ ուսումնական մասի փոխ-վարիչ-
ների պարբերական խորհրդակցութեաններին հրավիրումը, ինչպէս և
կազմակերպել հատկապէս գրանց համար կարճատև պրակտիկոսներ իրոք
լավագույն դպրոցներին կից: Պետք և վերջապէս ապահովել այդ աշ-
խատանքի համար լավագույն հարմածային ուսուցչիչներին առաջ քա-
շելու գործը, վորոնք ունեն պոլիտեսխնիկ դպրոցի շինարարութեան
փորձ, լով կազմակերպիչներ են ու մեթոդապէս փորձված:

Մեր դպրոցում ուսումնական կահավորմանը քիչ ուշադրութիւն է հատկացվում:

Կենսական իր վերջման մեջ այդ խնդրին այնքան մեծ նշանակութիւն է տալիս, վոր առաջարկում է դպրոցական և ուսումնական կահավորում և ուսումնական պիտույքներ արտադրող համալսութենական միավորում ստեղծել: Ֆիզիկական յերևույթները թույլ պատկերացումը, գրական լեզվի ազդատութիւնը, աշակերտների վճռական անգրագիտութիւնը—այդ բոլորը բացատրվում է նրանով, վոր մեր դպրոցներում կահավորման չգոյութեան պատճառով ֆիզիկական ազանգ-վում է կալիճով, իսկ գրականութիւնը՝ բերանացի:

Յեթն դպրոցներն իրենք և ժողկրթութեան բոլոր որդաններն ալիքի մեծ ուշադրութիւն նվիրած լինելին ուսումնական կահավորման խնդիրներին, մենք անալոյանորին ալիքի լայն չափերով ոգտագործելիս կլինելինք այդ նպատակի համար տեղական արգյունարարութիւնը, հենց դպրոցական արհեստանոցները (Ֆարգործուս, տեխնիկում)՝ ուսումնական պիտույքների արտադրութեան կազմակերպման համար: Խնդրը վսչ միայն վերջիններին բացակայութեան մեջ և. նույն իսկ դպրոցներում յեղած ուսումնական սարքա-վորումը՝ ֆիզիկայի պարագաները, քիմիական փոր-ձերի համար դանադան անութներ, կենդանի բնութեան անկյունը, կուկկցիաները յեվ հերբարիութմանը՝ այնպես վատ են պահպանվում, կտորատվում են, թալան-վում, մանազանդ արձակուրդներ ժամանակ, վոր դպրոցը նաև իր սեփական հանցանքով մնում է առանց վորև ակտուելի: Վսչ միայն դպրոցի աշակերտական ինքնազարութիւնը, այլ և դպրոցի վարիչը, հատկապես նրա ուսումնական մասի փոխվարիչը, և համապատասխան մասնագիտութեան ուսուցիչները պետք է պատասխանատու դառնան դպրոցի ուսումնական սարքավորման գրութեան և պահպանութեան համար: Պետք է վճռակա-նորեն վերջ տալ նման վերաբերմունքին դեպի ուսումնական պիտույք-ները:

ՈՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

«Ուսուցիչների աշխատանքների մանկավարժական ոժանդակու-թիւնը» կազմակերպելու հետ Կենսական առաջարկում է «Դպրոցա-կան աշխատանքների վորակի համար ուսուցչի պատասխանատու-թիւնը մեծացնել, առաջ քաշելով ու խրախուսելով նվիրված և իրենց գործը լալ հասկացող ուսուցիչներին»:

Դպրոցն իր ամենորոյա աշխատանքներով պետք է իմանա, թե ինչ գրութեան մեջ և աշակերտների առաջադիմութեան գործը «հիմ-նական թերութեան» դեմ տարվող պայքարում:

Այս հանդամանքը պարտաւորեցնում և դպրոցում մեծագույն խնամք ցույց տալ աշխատանքներին հաշվառման գործին: Հաշվառումը հին դպրոցում նրա համար եր, վոր «վորսային» հանցավորներին, հետամնացներին և պատժելին: Այստեղից եր բղխում պատիժներին, թվանշանների և այլն սխտեմը: Մեր դպրոցում հաշվառումը նրա համար և պետք, վոր ժամանակին «ոգնության» դանք հետ մնացող աշակերտներին, վոր ուսուցիչը ճիշտ պատկերացում ունենա, թե վորքանով և յուրացվել կայուն ծրագրով նշված գիտելիքների ծավալն ամբողջ դասարանի կողմից: Այժմ, յերբ մենք պետք և պայքարենք գիտելիքների բարձր մակարդակի համար, անհրաժեշտ և հատուկ ուշադրություն դարձնել հաշվառման գործին: Այդ տեսակետից միանգամայն չեն գահացնում առաջադիմության հաշվառման լակոնիկ և վոշինչ չասող այն ձևերը՝ այսպես կոչված «բավ»-երը, «հույժ բավ»-երն ու «անբավ»-երը, վոր ընդունված են մեր դպրոցների մեծ մասում: Խնչ են անում դրանք, ի՞նչպես և ինչ՞ով պիտի ոչնեւ աշակերտներին:

Այնինչ տարրական և միջնակարգ դպրոցում, վորտեղ «գիտության հիմունքներն» են դրվում, առաջնակարգ կարևորություն ունի առանձին դիսցիպլինների բաժինների յուրացումը. յուրաքանչյուր պրոցեսի առանձին-առանձին դիտումը: Առանց այդ բանի չի կարելի պայքարել ձեռք բերվող գիտելիքների կցկտուրության և մակերեսայնության դեմ: Դրա համար եւ անհրաժեշտ և ծավալուն հաշվառումն, վորտեղ ամեն մի աշակերտի վերաբերյալ յուրաքանչյուր դիսցիպլինից տրվում և լրիվ բնութագրեր, վորը խնամքով կատարվում և ուսուցչի կողմից ճշտորեն սահմանված ժամկետներին և անպայմանորեն հայտնի յե լինում թե աշակերտին և թե այն բրիգադին, վորի հետ նա աշխատում ե:

Սա առանձնապես կարևոր և միջնակարգ դպրոցի համար, վորտեղ դասարանը գործ ունի միջանի ուսուցիչների, իսկ ուսուցիչը՝ միջանի դասարանների հետ, վորտեղ, հետևաբար, աւելի դժվարանում և աշակերտի բազմակողմանի ճանաչման հնարավորությունը, քան տարրական դպրոցում, վորտեղ ուսուցիչ-կոմպլեկտորի միջոցով աշակերտի բազմակողմանի ճանաչումը համեմատաբար դժվար չի:

Այս զուգորդությամբ միջանի խոսք եւ աշխատանքի բրիգադ-ողակային սխտեմի մասին: Դա անվիճելիորեն դրական յերևույթ ե մեր դպրոցի կյանքում: Բրիգադում և ողակում աշխատելը վարժեցնում և կոլեկտիվ աշխատանքի և վոխադարձ ոգնության: Սակայն պետք և վճռականորեն պայքարել տեսատակաւ աշխատանքի թերադնահատման դեմ, վորն ամենուրեք տարածված ե: Բրիգադը չի վոչնչացնում առանձին աշակերտին, նա միայն առաջ և մղում յուրաքանչյուր աշակերտի առանձին աշխատանքը և բարձրացնում նրա հփեկտավորությունը: Բրիգադը գլմաղբը կութություն չի, այլ յուրաքանչյուրի պատասխանատվության բարձրացումը բրիգադային ընդհանուր

կողի կտրվի առաջ: Դրա համար ել պետք է վճարահանապես բեկանել միայն բրիգադի աշխատանքի հաշվառման գործադրումը: Աշխատանքի բրիգադային և ողակային սխեման վրա մի դեպքում չէ վերացնում յուրաքանչյուր առանձին աշխատանքի հաշվառման անհրաժեշտությունը: Այլապես դպրոցը կաշխատի հենվելով միայն ընդունակ, ժրաջան և առաջադեմ աշակերտների վրա, առանց ոգնություն ցույց տալու նրանց, վերոնք ամենից ավելի կարիք ունեն այդ ոգնությունը:

«ՄԱՆՐՈՒՆՔԻ» ՄԱՍԻՆ

Տնտեսավարների խորհրդակցությունն արտասանած իր ճառում (23. VI 1931 թ.) ընկ. Ստալինը խոսեց և «մանրունքի» մասին: Նա մատնանշեց, վոր այժմ պահանջվում է, «վոր մեր տնտեսավար ղեկավարները ձեռնարկությունները ղեկավարեն վոչ թե «ընդհանրապես», «ողից», այլ կոնկրետ կերպով, առարկայորեն, վոր նրանք յուրաքանչյուր խընդրին մատնանա վոչ թե ընդհանուր շաղակրատություն (большин) տեսակետից, այլ խիստ գործնականորեն, վոր նրանք չսահմանափակվեն գրություններով (отпиской) կամ ընդհանուր ֆրազներով ու լոզունգներով, այլ մտնեն գործի տեխնիկայի մեջ, թափանցեն գործի մանրամասների մեջ, թափանցեն «մանրունքների» մեջ, վորովհետև այժմ մանրունքից մեծ գործեր են ստեղծվում»:

Թեև ընկ. Ստալինն այս ցուցումն ուղղեց տնտեսավարներին, բայց նա բառացիորեն հավասար չափով վերաբերում է և լուսաշխատավորներին: Վճիռ ուսուցիչը չգիտե, վոր հաճախ «մանրունքից» է կախված լինում մանկավարժական վողջ աշխատանքի հաջողությունը: Հետևաբար աշխատանքի նոր ձևի կազմակերպումը թելադրում է մեծագույն ուշադրություն դարձնել «մանրունքին», սկսած այնպիսի հարցերից, ինչպես ուս. տարվա կազմակերպումն է (սկիզբ, վերջ, ընդհատումներ), և վերջացրած դպրոցական բուֆետով:

Վորպես որինակ վերցնենք դպրոցի վարչի գրություն խնդիրը: Ինչ՞եզ գործարանում գոյություն ունի կայուն ռեժիմ, կա դիրեկտոր և թոզ մեկը փորձի նրա կամքի հակառակ կարգադրություններ անել գործարանում: Իսկ դպրոցի վարժչը: Ընկ. Բուբնովը մի ժամանակ խորհուրդ էր տալիս լուսաշխատավորներին խոսել վերջապես «բամբոզ» (бамбук): Այդ «բամբն» ավելի շուտ վարչին է հարկավոր: Դպրոցի վարչին իրեն պետք է զգա գործարանի դիրեկտորի դերում: Իսկ մեզ մոտ այնպես է պատահում, վոր մինչև 1500 աշակերտ դաստիարակող դպրոցի վարչին ով ինչ կարգադրություն ուղում է, անում է: Պետք է ուժեղացնել վարչի դերը: Նա յե դպրոցի պատասխանատուն, այդ պատճառով էլ նրան պետք է տալ դպրոցի ղեկավարման ամբողջ գործը: Առանց դպրոցի վարչի վոչ մի փոփոխություն չպետք է լինի դպրոցում, պայմանով, վոր իրոք նրանից ել «հարցվի»:

Կամ այնպիսի «մանրունք», ինչպես կեղտը: Յեթե դպրոցը կեղ-

տոտ է, ապա կեղտոտ են նաև տետրերը: Իսկ յեթե տետրը կեղտոտ
են, չի լինի և զրազրիտութիւն, չի լինի կետադրութիւն, չի լինի
ուղղագրութիւն, անփութութիւն կլինի թվարանութիւն դործում:
Կամ դպրոցի կահույքի դասավորման խնդիրը: Հայտնի յի, վոր
մի շարք դասարաններում բարձր նստարաններն անպայմանորեն
տուփ են դրվում, ցածրերը՝ անպայմանորեն հետևում: Բարձր նստա-
րանների վրա նստում են փոքրերը, վորոնց դուռնը հազիվ են յերևում:
Ցածրերի վրա՝ հասակավոր աշակերտները, վորոնց խանգարում են
իրենց իսկ սիտները:

Դասամիջոցների կազմակերպումը. յուրաքանչյուր դասից հետո
յեւթի ու մուտքի կազմակերպումը. տաք նախաճաշի կազմակերպումը.
դասերի լավ հաջորդականութիւնը, միապաղապարտութիւնից և աշակերտ-
ների չափազանց ծանրաբեռնումից խուսափումով. դասի, երա-
կուսիայի, գործարանի, դպրոցի արհեստանոցի աշխատանքի համար
հարկավոր բոլոր անհրաժեշտ նյութերը, բոլոր պիտույքները, պլանը,
հարկավոր մարդիկ և այլն—ժամանակին նախապատրաստելու հար-
ցերը: Նույնիսկ դպրոցի արտաքինոցը, յերբ դպրոց եք մտնում և ամ-
բողջ դպրոցում դուք արտաքինոցի «ազդեցութիւնը», մի բան, վոր,
իդեալ ասած, հաճախակի յերևութի են, զարմանալի են. չի, վոր դասե-
րի վերջում և՛ ուսուցիչը և՛ աշակերտները չեն աշխատում՝ ամբողջո-
վին շրմած լինելով այդ հոտից:

Պետք է հատկապես կանգ առնել դպրոցական շենքի վրա: Մեր
դպրոցական շենքերի ֆիռը բացարձակապես հետ և մնում դպրոցա-
կան ցանցի բուռն աճումից: Այստեղից են ըլիւում և մեր դպրոցական
շենքերի ծայր աստիճան բեռնավորութիւնը: Այստեղից են յերկու
և նույնիսկ յերեք հերթի պարապմունքները: Պետք է հետևարար
անընդհատ աշխատել մեր բյուջետային և հասարակական հատկացում-
ներն ավելացնել նոր կառուցումների համար: Դա ճիշտ և բայց այդ
վոչ մի դեպքում չի ազատում մեզ յնդած շենքերի ուղիղապա-
հորժման համար պայքարելուց: Պետք է այդ շենքերը բեռնաթափել
կողմնակի ապրողներից, հետճաշյա դանապան կուրսերի ու դպրոց-
ների պարապմունքներից: Վերջիններին համար պետք է ողորդործվին
հիմնարկութիւններ շենքերը, վորոնք յերկեայան ազատ են, և վոչ
թեք դպրոցները, վորոնք պետք է մաքրվին և ողորդվին: Այնտեղ,
վորտեղ այս խնդրի շուրջը մարիլիզացիայի յի յիմարկվել պրելատարա-
կան հասարակութիւնը, այնտեղ հայտաբերվել են տեղական ու-
սոււրներ և դպրոցական շենքը ազատել են դոնե այնչափով, վոր հատ-
կացվին միայն յերկտաների պարապմունքների համար:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԻՆՎԵՍՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնն իր վորոշման մեջ առաջարկում և ճշրելախաների ինք-
նավարութիւնն որդանների աշխատանքն այնպես դնել դպրոցում, վոր
նա զլրատորապես ուղղվի ուսուցման դործի բարձրացման և դպրոցա-
կան դիտակցական դիսցիպլինայի ամրացման կողմը:

Դպրոցաւարութեան մեջ պետք է իշխի միանձնյա ղեկավարութեանը։ Ուսուցիչն անձնական պատասխանատւութեան է կրում աշխատանքի վորակի համար։ Յե՛ղ այս բանն այնքան ավելի հեշտ կլինի իրագործել, վորքան ակալիմ և բովանդակալից կաշխատի դպրոցի աշակերտական ինքնավարութեանը։ Պետք է ասել, վոր այստեղ էլ հաճախ ձևադարձութեանը կրժուած է սպանում է կենդանի աշխատանքը։ Դպրոց եւ մանուած. այնտեղ կան բազմաթիւ աշակերտական կազմակերպութեաններ և խմբակներ. և՛ աշկում, և՛ Պաշլ-Ավիաքիմ, և՛ Մուպր, և՛ անաստղածներ, և՛ Կանը, և ելի ու ելի։ Իսկ յերբ նայում ես աշխատանքի բովանդակութեանը, հարցնում, որինակ, Մուպրի կամ աշկումի անդամին, թե՛ նա կոնկրետ ինչ է անում, պատասխան չես ստանում։ Լավագույն դեպքում կլսես, վոր մասնակցել է հերթական ժողովին, վորտեղ լսելի է հերթական հաշվետւութեան և տեղի յս նկնել հերթական ընտրութեան։ Լավագույն դեպքում իրական աշխատում է միայն փոքրաթիւ տկտիւլ՝ ծանրաբեռնված մինչև գլուխը։

Ծանոթ չի՞ այս պատկերը բոլոր ուսուցիչներին։ Ել ինչ ժամանակ կլինա այստեղ դաստիարակչական աշխատանքների համար։ Ընդհակառակը, նման դեպքերում յերեւաններ վարժվում են ցուցամուրթյան և ձևականութեան, թիթհամիտ և վոշ լուրջ վերաբերմունքի հանդեպ իրենց հասարակական աշխատանքների։ Լավ է սկսած գործը հասցնել մինչև վերջ։ Լավ է աշակերտական ինքնավարութեան աշխատանքները խորապէս կապել դպրոցում տարվող ուսումնական աշխատանքների հետ։ Իսկ դրա համար ուսուցիչը պետք է ինքնավարութեանը նայի վորպէս իր աշխատանքին, վորտեղ նա պետք է անհրաժեշտ ոգնութեան և ուղղութեան ցույց տա՝ համաձայնեցնելով իր աշխատանքը դպրոցի պիտոնի կազմակերպութեան հետ։

Ուսուցիչը պետք է նկատի ունենա, վոր Կենտկոմի վորոշման և պոլիտկոմի կական դպրոցի համար մղվող պայքարում քացատիկ նշանակութեան ունի պիտոներ կազմակերպութեանը։ Նրանց աշխատանքի ոժանդակելը, նրանց ողակավարների մանկավարժական վորակը բարձրացնելը, պիտոներ ակալիմի ուսումնական աշխատանքի համար պայմաններ ստեղծելը—ուսուցչի կարևորագույն խնդիրներն են։

ՀԱՆՐԱՊԵՏ ՅԵՎ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԳՊՐՈՑ

Կենտկոմը դպրոցական աշխատանքների անբավարար վորակի գլխավոր թերութեաններից մեկն է համարում դպրոցի կենդանի, կոնկրետ ղեկավարութեան քացատկարութեանը։ Դա միանգամայն ճիշտ է։ Յերեսով դեպի մասսայական դպրոցը, դեպի ուսուցչի ամենոցա աշխատանքը—անա սրա համաձայն պետք է այժմ վերակառուցվի դպրոցի ղեկավարման խնդիրը վերելից ներքև։ Միայն աշխատանքի նման կազմակերպմամբ հնարավոր կլինի դպրոցի ղեկավարման գործն առաջովել այնպիսի խոտորումներ կրկնութեանից, ինչպէս «մեթոդական պրոժեկտորութեանը», դպրոցի ուսումնական աշխատանքների նշանա-

կուլթյան նվազեցումը, դպրոցի կյանքում այնպիսի կազմակերպական ձևերի արմատացումը, վորոնք իրապես խանդարում էին դպրոցին աշխատել նորմալ և արդյունավետ կերպով (դասարանական սխեման, դպրոցական խորհրդի, աշակերտական ինքնավարության վերացում):

«Յերեսով դեպի դպրոց» լոգունգն իրականացնելու խնդրում արտակարգ նշանակութուն ունի ամենորյա կենդանի և միանգամայն կոնկրետ հրահանգավորման կազմակերպումը: Կենտկոմի վորոշումը հենց խոսում է հրահանգիչների ինստիտուտի մասին, վորոնք «ըջանային ողակներից սկսած մշտական, պրակտիկ ոգնություն են ցույց տալիս ուսուցչին նրա դպրոցական ամենորյա աշխատանքներում»:

Ժողկրթության սխեմանում շրջվործկոմիներին կից կան շրջտեսչություններ:

Այժմ այդ շրջանային տեսչությունները կկազմակերպվեն վորպես ժողկրթության շրջանային բաժիններ: Պետք է պարզապես ասել, վոր յիժե այժմ ել շրջանային ողակների աշխատանքի սխեման և բնույթը պիտի մնա նախկինը, ապա շրջլուսարմնի կազմակերպության փաստով գործը բնալ չի փոփոխվի: Շրջանային տեսչությունը շրջանում ամեն ինչով զբաղվում եր, բացի դպրոցից: Լուստեսուչն ինչ ցանկանաք գիտեր, բացի դպրոցական աշխատանքի մեթոդներից: Դա մեծ մասամբ բացատրվում եր հենց շրջ. տեսուչների ընտրությամբ: Յերևի բացակայում եր այն աղբյուրը, վորտեղից կարելի կլիներ վերցնել այդ տեսուչներին, վորոնք պետք է ոժանդակեյին ուսուցչին նրա ամենորյա աշխատանքներում, վորոնց մասին խոսում է Կենտկոմի վորոշումը: Հատկապես վերջին 2 — 3 տարում պոլիտեխնիկ դպրոցի շինարարության պրակտիկայում, բոլոր դժվարությունները հաղթահարելու համար մղվող պայքարում աճեց խորհրդային ուսուցչության մի նշանակալից ակտիվ, վորը և՛ քաղաքականապես վորակավորվեց, և՛ միևնույն ժամանակ ձեռք բերեց խորհրդային դպրոցի մեթոդական լուրջ վորձառություն: Յիժե հատկապես այդ ելեմենտներից չի հավաքագրվում տեսուչների կազմը, ապա դա մի ավելորդ ասպցույց է, վոր ժողկրթության որդանները կտրված են դպրոցից և չեն ճանաչում այն իսկական ակտիվին, վոր նրանք արդեն ունեն:

Կենտկոմի վորոշման իրականացման ճանապարհին առաջին գործը, վորով պետք է զբաղվել անմիջապես, տեսչական ինստիտուտի հաջող կազմակերպումն է, սկսելով ներքեից՝ շրջանից: Այն վորձված ուսուցիչները, վորոնք լավ գիտեն դպրոցն ու նրա խնդիրները, վորոնք ծանոթ են շրջանի ուսուցչությանը վորպես մեր դպրոցին ըստ ամենայնի նվիրված մարդիկ, պիտի զրվեն այդ տեսչական աշխատանքին: Սովորաբար զանգատվում են, թե անհնար է այդ աշխատանքին ներգրավել շրջանի ուսուցչության լավագույն ներկայացուցիչներին նյութական շահագրգռվածության անբավարարության պատճառով: Հենց այդ ել վկայում է Կպերատիվ անճկունությունը — տեսուչների ինստիտուտի քաղաքական նշանակությունն ըմբռնելու բացակայությունը: Միժե

թիկուզ ամենաաղքատ շրջանի դպրոցական բազմահազար բյուջեյի առկայութեան և դպրոցի հանդիսյ հայտարարվող խորհրդային հասարակութեան հակայական ուշադրութեան պայմաններում դժվար է շրջանի համար յեւրկու տեսչի բավարարել համապատասխան իրավական և նյութական պայմաններով: Հասկանալի չէ, վոր խնդիրն «որչեկտիւ պայմաններէ» մեջ չի, այլ այդ խնդիրը լուծելու անկարողութեան և չկամութեան:

Ուսուցչական ակտիւից դուրս յեկած տեսչի համար, վորը ճանաչում է դպրոցը, ինքն էլ աշխատել և այնտեղ, դժվար չի լինի ստեղծել իր շուրջը ուսուցչական այն ակտիւը, վորի նախաձեռնութեան և որինակի հիման վրա շրջանի ամբողջ ուսուցչութեանը կոչակի դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բոլոր մանրամասները և հենց դրանով էլ առաջ կշարժի շրջանի բոլոր դպրոցները՝ իրագործելու համար այն խնդիրները, վորոնց մասին խոսում և Կենտկոմի վորոշումը:

Հաճախ դանդաղում են, վոր տեսուչներին անվերջ փոխադրում են այլ աշխատանքների: Բայց վորքան ավելի մասնադիտանա մեր տեսուչը և դառնա իսկապես «դպրոցական հրահանգիչ» իր գործի մեջ, վորքան ավելի լավ մասնագետ յերևա նա շրջանի կուսակցական և խորհրդային կազմակերպութեւնների, ինչպես և հենց ազգաբնակչութեան աչքում, այնքան քիչ կփոխադրվի այլ աշխատանքների:

Հրահանգչի համար ուսուցչական ակտիւը և վերջինիս միջոցով էլ ամբողջ ուսուցչութեանը կազմակերպելու լծակը պետք է հանդիսանա Կենտկոմի վորոշմամբ մասնանշվող մի այլ պրակտիկ միջոցառումը՝ որինակելի (փորձնական) դպրոցների ցանցի կազմակերպումը:

Դպրոցական գործում հաճախ զարմացում է լավագույն դպրոցների աշխատանքի մասին վորեւ տեղեկութեան իսպառ բացակայութեանը: Այնինչ դպրոցի՝ պոլիտեխնիկական սկզբունքներով վերակառուցումը, վորին մենք ձեռնարկել ենք, բացառիկ սրութեամբ է դնում լավագույն որինակների և նմուշների փորձի և ցուցադրման հարցը: Հեկավարութեան անկոնկրետութեանն է, վոր հաստատվում է աշխատանքի այդ լավ որինակների ցուցադրութեան որեւք դարձած բացակայութեամբ: Շրջանի լավագույն դպրոցը, «լավագույն»՝ այնտեղ տարվող պոլիտեխնիկական ուսուցման, ձեռք բերված գիտելիքների, կազմակերպված կոմդաստիարակութեան, ամբողջ դպրոցական ռեժիմի հստակ և կայուն կազմակերպութեան բարձր վորակ տալու իմաստով — այդպիսի դպրոցը պետք է իսկապես որինակելի դառնա շրջանի ուսուցչութեան համար, իսկապես հենարան՝ հրահանգչի համար: «Հենարանային» այն առումով, վոր հենվելով այդ դպրոցի կոնկրետ աշխատանքի վրա՝ հրահանգիչը վոչ միայն խոսքով, այլ և ցույց տալով կհրահանգի շրջանի ուսուցչութեանը, թե ինչպես պետք է տվյալ արտադրական շրջապատում իսկապես պոլիտեխնիկական դպրոց կառուցել:

Բոլոր շրջաններում հաջող կերպով կազմակերպել այդ յերկու
ողակները, ժողկրթության ամբողջ ղեկավար սխտանի միջոցով ապա-
հովել այդ օղակներն ամենորոյա կոնկրետ աշակցությամբ նրանց աշ-
խատանքի ընթացքում, այնպես կազմակերպել թե գիտահետադա-
կան, թե Խաբքսիտ-մանկավարժների ընկերության և Լուսժողկոմա-
տի ու նրա տեղական բաժանների և Վարակի բարձրագույն ինստիտու-
տի և վերջապես մանկավարժական մամուլի գործունեյությունը, վեր-
առաջին հերթին նրանք ռզնության գան այդ օղակներին — այս և
հենտկամի վերջուման շուտագիտութ կենսագործման հիմնական նախա-
դրյալը։ Զե՛ք վոր խոսքը վերաբերում և ամբողջ յերկրում ցրված տաս-
նյակ հազարավոր դպրոցներին, հարյուր հազարավոր ուսուցչությանը,
վորի ճնշող մեծամասնությունը հենց նոր և սկսել դպրոցում աշխատել։
Հարելի՛ք յն պահաց դպրոցական գործը լավ իմացող հրահանգչի, առանց
հենարանային դպրոցների աշխատանքի՝ լավագույն նմուշների գիտո-
ղական ցուցադրման՝ իսկական ղեկավարություն ցույց տալ դպրոցնե-
րի ուսուցչության այս գանգվածին։ Գիտահետադաժողկոմական մանկավար-
ժական և միթողական աշխատանքի այն կտրվածությունը դպրոցի
կոնկրետ ղեկավարությունից, վորն այնպես հետևողական պարզությամբ
ի հայտ բերեց Կենտկոմն իր վերջումամբ, լիկվիդացիայի կենթարկվի
այն չափով, վորչափով ժողկրթության ղեկավարությունն ամբողջ
գծով կապահովի կապը այդ հրահանգիչների և հենարանային դպրոց-
ների հետ։

ՈՒՍՈՒՑՁՈՒԹՅԱՆ ՆՇՈՒԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Հենվելով Լենինի պատգամներին՝ կուսակցությունն ու խորհրդա-
յին իշխանությունն անխոնջ կերպով՝ հետամտում են ուսուցչության
նյութական դրության բարելավմանը։ Գիտակցելով այն հսկայական
խնդիրներն ու պարտականությունը, վոր ընկնում են ժողովրդական
ուսուցչի վրա, կուսակցությունն ու խորհրդային իշխանությունն ան-
խնայորեն պայքարում են այն անձանց և հիմնարկների դեմ, վորոնք
խախտելով կուսակցության հրահանգներն ու վորդուհները՝ ուսու-
ցիչներին համար չեն ապահովում աշխատանքի նորմալ պայմաններ և
խախտում են նրա իրավունքները։ Կենտկոմն իր վերջումամբ այժմ ա-
ռաջադրում է մի շարք նոր միջոցառումներ, վորոնք ապահովում են
ուսուցչության դրության հիմնական բարելավումը։ Այդ ցուցումնե-
րից հիմնականներն են Վստորին և միջնակարգ դպրոցի ուսուցչության
աշխատավարձի բարձրագույն միջոցառումներ՝ մշակելու առաջարկու-
թյունը, ուսուցիչների աշխատանքի վարձատրության տարբերակված
(дифференцированный) սխեման ըստ շրջանների, ըստ կվալիֆիկացիայի
և աշխատանքի վորակի, հարվածային ուսուցիչներին նկատմամբ խրո-
խուսիչ միջոցներ կիրառելու առաջարկությունը և ուսուցիչներին
մթերք ու արդ. սպորանք մատակարարելու կայուն կարգ սահմա-

նելը: Նկատի ունենալով ուսուցչության համար մատակարարման բացառիկ կարևոր նշանակություն ունեցող խնդիրները, Կենտկոմի վորոշման այդ մասը մեջ ենք բերում ամբողջովին. «Ուսուցիչներին սննդամթերք և արդյունաբերական ապրանք մատակարարելը պետք է կատարել քաղաքներում և արդյունաբերական շրջաններում նրանց բանվորական փակ բաշխիչներին և ճաշարաններին կցելու միջոցով, բայտ վորում նրանք պետք է բավարարվեն արդյունաբերական բանվորների նորմաներով: Կոլտնտեսություններում ուսուցիչներին պարենավորման մթերքներ մատակարարել կոլտնտեսությունների պարենավորման ֆոնդից, տվյալ շրջանի արդյունաբերական բանվորների նորմաներով: Գյուղական ուսուցիչներին արդյունաբերական ապրանքներ և արդյունաբերական մթերքներ, ինչպես նաև դեռևս կոլտնտեսություն չունեցող գյուղերում ուսուցիչներին պարենավորման մթերքներ մատակարարել կենտրոնացված մատակարարման ֆոնդից, տվյալ շրջանի արդյունաբերությունից բանվորների նորմաներով»:

ՅՈՒՆԱՄՅԱ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կենտկոմն իր վորոշմամբ խոշորագույն մի նոր խնդիր է դնում մեր առաջ. անցնել յոթնամյա պարտադիր կրթություն՝ դիտելով վերջինս վորպես մի ետապ կուսակցության ծրագրի պահանջի՝ մինչև 17 տարեկան յերեխաների ու պատանիների ընդհանուր և պոլիտեխնիկ կրթության լրիվ իրականացման:

Կենտկոմը հանձնարարում է համապատասխան կազմակերպություններին մշակել այդ պատմական խնդրի իրագործման պլանը: Բայց այդ չի նշանակում, թե մինչև այդ պլանի հաստատումն ու հրապարակումը տեղերում չպետք է մարտական աշխատանք ծավալել յոթնամյա պարտադիր կրթություն անցկացնելու համար:

Դեռ անցյալ ուսումնական տարում քաղաքների և արդյունաբերական կենտրոնների մեծ մասում փաստորեն իրագործվեց յոթնամյա կրթության վերաբերմամբ այդ պարտադրությունը: Այժմ պետք է չեն կերպ ընդլայնել այդ պրակտիկան: Յուրաքանչյուրը պետք է ձգտի, վոր իր շրջանում վորքան կարելի չի շատ կետեր լինեն, առաջին հերթին արդյունաբերական, ՄՏԿ, խորհրտմներ և խոշոր կոլտնտեսներ, վորոնք անցնեն յոթնամյա պարտադիր կրթությանը, սկսելով թեկուզ նրանից, վոր պարտադիր կերպով ապահովեն այդ կետերի քառամյա կրթություն ստացած յերեխաների համար հինգերորդ խմբերում սովորելու հնարավորությունը: Դա նշանակում է, վոր հենց այժմ պետք է մեծ աշխատանք ծավալել մանկավարժական կադրեր պատրաստելու համար, դպրոցական շենքեր դտնելու համար, 12—14 տարեկան յերեխաներին հաշվառման յինթարկելու համար, յոթնամյա կրթության շուրջը կուլտարշավային մասսայական շարժում ստեղծելու համար: Ծիշտ ա յն պ ե ս, ի ն չ պ ե ս պ ա ռ տ ա դ ի Ր տ ա Ր ր ա

կան դպրոցի պայքարում ուսուցչութիւնը դնում եր
առաջին, այնպէս եւ այժմ, պարզ է, Վոր մանկավարժը
պիտի լինի այդ գործի նախաձեռնողն ու կազմակեր
պողը:

Կենտկոմն ընդհանուր պարտադիր յոթնամյա կրթութեան պլանի
մշակման ցուցում տալով՝ միաժամանակ տեղին է, Վոր պնդում է
Երեւանում պարտադիր տարրական կրթութեան մասին Կենտկոմի
25 VII 30 թ. վորոշումն իր ժամկետում կենսագործելու անհրաժեշտու
թեան մասին:

Միանով Կենտկոմը նշում է, Վոր չի կարելի ընդհանուր պարտա
դիր տարրական (քառամյա) կրթութեան կիրառման խնդիրն արդէն
լուծված համարել: Մենք այդ խնդիրը հիմնականում լուծել ենք: Բայց
այժմ հարկավոր է ամրապնդել: Պետք է ձգտել յերեխաների 100
տոկ. ներգրավմանը տարրական դպրոցներում: Դպրոցը պետք է ընդ
գրկի այն բոլոր յերեխաներին, Վորոնք այս կամ այն պատճառով
մինչև այս տարի դպրոց չեն հաճախել: Հասկապես պետք է դպրոցա
կան կրթութեան մեջ ներգրավել այն մեծահասակ 11—15 տարեկան
ներին, Վորոնք առաջին սովորել տարրական դպրոցներում կամ լրիվ
չեն անցել նրանց կուրսը: Պետք է բոլոր յերեխաների համար ձեռք
բերել իսկական լիարժեք ուսումնական տարի, այսինքն 100 տոկ.
հաճախում: Պետք է հիշել, Վոր զխալոր խնդրը՝ վորակի համար մըդ
վող պայքարը՝ վոչ մի կերպ չի վերացնում դպրոցական
ցանցի հետագա թվական աճման և բոլոր յերեխանե
լն տարրական ու յսթնամյա կրթութեան մեջ լրիվ
րեն ներգրավելու հարցը:

Համ(բ)ԿԿ՝ տարրական և միջնակարգ դպրոցների մասին պատ
մական վորոշման իրականացման համար Լուսժողկոմատի Կոլեգիան
պրակտիկ միջոցառումների ծավալուն պլան է մշակել: Լուսժողկոմատի
բոլոր սեկտորներին և ժողկրթութեան որդաններին ավելի քան 130
առաջադրութիւն է տրված: Այս առաջադրութիւններին համապա
տասխան պետք է խորացրած աշխատանք կազմակերպել ուսումնակ
ծրագրերի ուսուցման մեթոդների, մեթոդական ղեկավարութեան կ
մակերպման, մանկավարժական և մեթոդական կադրեր պատրաստելու,
դպրոցի նյութական բազայի, դպրոցի կահավորման, ղեկավարման,
աշակերտական ինքնավարութեան և պիտանք կազմակերպութեան բա
րելավման գծով:

Միանգամայն պարզ է, Վոր այդ աշխատանքներում անհրաժեշտ
է ամբողջ ուսուցչութեան մասսայական ակտիվ մասնակցութիւնը:

Կենտկոմի վորոշումը՝ դա խոշոր և հաստատուն գիտելիքների
դպրոցի, կոմունիստական դաստիարակութեան և պոլիտեխնիկ կրթու
թեան դպրոցի կառուցման մարտական ծրագիրն է:

Անձնական ուրիշակի ուժը—առաջին հերթին՝ ուսուցիչ
հարվածայինի,—իր վորակը բարձրացնելու համար աշխատելու կարո

դուժյուհնը, մեթողական վարպետութեան բարձրացումը, մարքս-լե-
նինյան մանկավարժութեան խոշոր սկզբունքային հարցերն ըմբռնել
կարողանալը, դպրոցական կյանքի ընթացիկ «մանրունքից» գլուխ
դպւրս բերելը, մարտական տեմպերով, սակայն առանց կաղմալուծող
շտապողականութեան աշխատել կարողանալը,—ահա թե ինչն է կան-
խորոշում Կենտկոմի վորոշումն իրագործելու համար մղվող պայքարի
հաջողութեանը:



Թարգմ. Մ. Սեվակ
Խմբ. Խ. Ավագյան
Տեխն. խմբագիր Տ. Խաչվանյան
Մտագրիչ Լ. Արսվյան
Հանձնված է արտադրության 3 ագուս. 1933 թ.
Ստուգված է գրագրելու 8 ագուս. 1933 թ.
Գլավլիս № 7439 (ք). Հրատ. № 2159.
Պատվեր № 17. Տխրած 1000.

Կուսիռատի տպարան. Տեքնվան. 143.000 տպ. նս.




ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003090

9762 60 407.



154.

Г.А.Б. в Лягр.

А. 1938 г.

Ант № 219

М. С. ЭПШТЕЙН

За политехническую школу

Госиздат ССРА Эривань—1933